«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ԳԱՎԱՌԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ա. ԹԱՄԱՄՇԵՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՋԵԿՈՒՅՑ

Երևան – 2024

ՆԱԽԱԲԱՆ

«Գավառի ակադեմիկոս Ա.Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԳՊԳՔ, ՄՈՒՀ կամ Քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումի համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգում և իրականացնում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» (ՈԱԱԿ) հիմնադրամը: Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Գնահատումը կատարվել է ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի «Փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից: Հավատարմագրման գործընթացն իրականացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսավորմամբ: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 2
ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ 4
ՄՈՒՀ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 5
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 7
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 16
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 16
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 16
ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 19
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 19
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 23
III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 29
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 37
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 42
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 48
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 51
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 56
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 62
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 68
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 69
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 71
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 74
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 77
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 78

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ

ՀՀ ԿԳՄՄՆ «Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (ՊՈԱԿ) Գեղարքունիքի մարզի միակ ուսումնական հաստատությունն է, որն իրականացնում է գյուղատնտեսության ոլորտի կրթական ծրագրեր: Քոլեջը հիմնադրվել է 1929 թվականին Նոր Բայազետում և սկզբնապես կոչվել է Անասնաբուծական-անասնաբուժական տեխնիկում:

Տարիների ընթացքում քոլեջն անցել է մի շարք վերակազմակերպումներ և անվանափոխություններ: 1971 թվականին այն միավորվել է Կամոյի սովխոզին և վերակազմավորվել որպես Սովխոզ-տեխնիկում: 1992 թվականին, սեփականաշնորհման գործընթացի և տնտեսական բարեփոխումների շրջանակում, այն վերանվանվել է Կամոյի գյուղատնտեսական տեխնիկում:

1996 թվականի ապրիլից քոլեջը ստացել է նոր անվանում՝ ՀՀ Գյուղատնտեսության նախարարության «Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ»: 2002 թվականի դեկտեմբերին հաստատությունը վերանվանվել է «Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ: 2012 թվականին այն անցել է ՀՀ Կրթության և գիտության նախարարության ենթակայության տակ, իսկ 2019 թվականից կոչվում է ՀՀ ԿԳՄՄՆ Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ:

ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող հավատարմագրման գործընթացի շրջանակում ՄՈՒՀ-ը 2021 թվականի մայիսի 17-ին ՈԱԱԿ Հավատարմագրման հանձնաժողովի թիվ 48 որոշմամբ ստացել է պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով:

ՄՈՒՀ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ[1]

«Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ը Գեղարքունիքի մարզի միակ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունն է, որը պատրաստում է մասնագետներ գյուղատնտեսության ոլորտի համար: Քոլեջը ներկայումս իրականացնում է վեց մասնագիտական կրթական ծրագիր (ՄԿԾ), որոնցից հինգը միջին մասնագիտական են, իսկ մեկը՝ նախնական, արհեստագործական:

Քոլեջը մարզի գյուղատնտեսական կրթության և մասնագետների պատրաստման առանցքային հաստատությունն է: Սակայն ուսանողները հիմնականում Գավառ խոշորացված համայնքից են, ինչը հիմնականում պայմանավորված է մարզում բնակավայրերի միջև տրանսպորտային հաղորդակցության խնդիրներով:

Գեղարքունիքի մարզի 2017-2025 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով գերակա ուղղություններից մեկը գյուղատնտեսության արդիականացումն է, ներառյալ բարձրարժեք գյուղատնտեսության և գյուղատնտեսական ապրանքների վերամշակման զարգացումը՝ նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ: Մյուս առաջնահերթությունը մարդկային կապիտալի հզորացումն է՝ մարզի աշխատաշուկայի կարիքներին համապատասխան երիտասարդ մասնագետների պատրաստմամբ: Քոլեջի կրթական ծրագրերը, ներառյալ անասնաբուժությունը, կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիան, նպաստում են այս նպատակների իրագործմանը:

Հաստատության դասախոսական կազմը բաղկացած է 27 հիմնական և 4 համատեղությամբ աշխատող գործատու-դասախոսներից:

2024 թվականի սեպտեմբերի դրությամբ քոլեջում սովորում է 281 ուսանող: «Ֆինանսներ» մասնագիտությամբ սովորում է 62 ուսանող՝ 75 լիցենզիոն տեղից, «Հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ՝ 43 ուսանող՝ 45 լիցենզիոն տեղից, «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում»՝ 52 ուսանող՝ 80 լիցենզիոն տեղից, «Անասնաբուժություն»՝ 36 ուսանող՝ 80 լիցենզիոն տեղից, «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա»՝ 49 ուսանող՝ 80 լիցենզիոն տեղից, և «Համակարգիչների շահագործում»՝ 39 ուսանող՝ 90 լիցենզիոն տեղից:

Շրջանավարտների զբաղվածության վիճակագրությունը ցույց է տալիս, որ բուհում ուսումը շարունակողների տոկոսը տատանվում է 18.8%-ից մինչև 35.7%:

[1] Քոլեջի գործունեության համատեքստի նկարագրման համար աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը, ռազմավարական ծրագիրը, փորձագիտական այցի հանդիպումները, Գեղարքունիքի մարզի զարգացման ծրագիրը:

Նախքան ավարտելն աշխատանք գտնող շրջանավարտների թիվը համեմատաբար փոքր է՝ տարեկան մեկից երկու ուսանող: Թեև մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների տոկոսը ընդհանուր առմամբ ցածր է, վերջին տարիներին նկատվում է դրական միտում՝ հասնելով 9.4%-ի (5 մարդ): Գործազուրկ շրջանավարտների տոկոսը տարբեր տարիների կտրվածքով տատանվել է 13.5%-ից մինչև 30.3%:

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

«Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի «Փորձագիտական խմբի ձևավորման կարգի» պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձագիտական խումբը հաշվի է առել նաև, որ Քոլեջը 2020 թվականին անցել է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց, որի արդյունքում 2021 թվականին ուսումնական հաստատությանը շնորհվել է պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 2 տարի ժամկետով: Փորձագիտական զեկույցում նշված թերությունների և խորհրդատվությունների հիման վրա 2021 թվականին հաստատվել է թերությունների վերացման վերանայված ծրագիր-ժամանակացույցը:

ՀՀ որակավորումների ազգային շրջանակի 4-րդ և 5-րդ մակարդակներին համապատասխան՝ Քոլեջն իրականացնում է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր: Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջը գյուղատնտեսության ոլորտում միջին մասնագիտական կրթություն իրականացնող միակ հաստատությունն է մարզում, որի գործունեությունը միտված է տարածաշրջանի կրթական խնդիրների բավարարմանը և տնտեսության զարգացմանը:

Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջի կառավարման և որակի ապահովման համակարգերի վերլուծությունը ցույց է տալիս, որ քոլեջը դեռևս բավարար քայլեր չի ձեռնարկել իր ռազմավարական հիմնախնդիրների իրականացման ուղղությամբ: Քոլեջի ռազմավարական ծրագրի սահմանած հիմնախնդիրներից են ստեղծել գրավիչ կրթական միջավայր, տրամադրել բարձրորակ և արդյունավետ ծառայություններ՝ միտված ուսանողների կարիքների բավարարմանը, բարձրացնել կառավարման արդյունավետությունը: Ուսումնական հաստատությունն իր զարգացման ռազմավարությունը դիտարկում է տարածաշրջանի առանձնահատկության հաշվառմամբ գյուղատնտեսության և

դրան աջակցող ոլորտներում մասնագետների պատրաստման տիրույթում, սակայն չունենալով տվյալների հավաքագրման հստակ մեխանիզմներ՝ չի կայացնում տվյալահենք որոշումներ, որոնք կնպաստեն կրթական գործընթացների արդյունավետ պլանավորմանը և կառավարմանը: Տվյալահենք որոշումների կայացումը, ինչպես նաև շահակիցների կարիքների վերհանումը թույլ կտա հիմնավորված որոշումներ կայացնել կրթական ծրագրերի և կառավարման գործընթացների արդյունավետության վերաբերյալ: Ռազմավարական պլանավորման համատեքստում գործողությունների հստակեցումը և պլանավորման ժամանակացույցի ճշգրտումը հնարավորություն կտան նաև առավել արդյունավետ իրականացնել կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր: Քոլեջին անհրաժեշտ է վերանայել իրականացվող առկա ուսումնասիրությունների՝ հարցումների մեթոդաբանությունն ու բովանդակությունը, միևնույն ժամանակ՝ մշակել և ներդնել տվյալների հավաքագրվան այլընտրանքային եղանակներ և գործիքակազմ:

Դիտարկելով քոլեջի ռազմավարական կառավարման ու որակի ապահովման գործընթացները՝ փորձագիտական խումբը գտնում է, որ տվյալների վրա հիմնված վերլուծական մեխանիզմների ներդրումը և ռազմավարական պլանավորումն ու որակի ապահովման գործընթացի փոխկապակցումը կնպաստի քոլեջի կայուն զարգացմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Քոլեջը սահմանափակ ֆինանսական ռեսուրսներով կարողանում է ապահովել կրթական ծրագրերի կատարումը: Քոլեջն ունի բավարար ենթակառուցվածքներ, նյութատեխնիկական բազա՝ լսարաններ, լաբորատորիաներ, որոնք ունեն բարելավման և զարգացման շարունակական անհրաժեշտություն: Քոլեջը հնարավորություն է ստեղծել նաև օգտվելու գործընկեր կազմակերպությունների ռեսուրսներից: Սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ պրակտիկաների կազմակերպման հարցում հաստատությունն ունի խնդիրներ, որոնց շտկելու դեպքում ուսանողների համար կարելի է ստեղծել լիարժեք պայմաններ և հավասար հնարավորություններ՝ արդյունավետ օգտվելու գործընկեր կազմակերպությունների ռեսուրսներից:

Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջն առաջարկում է տարբեր կրթական ծրագրեր, որոնք նպատակ ունեն ուսանողների շրջանում զարգացնելու ոլորտին համապատասխան հմտություններ և գործնական գիտելիքներ: Կրթական ծրագրերը հիմնականում ներառում են գյուղատնտեսության, անասնաբուժության, հարակից ոլորտների ուղղություններ: Ուսանողներն հնարավորություն ունեն մասնակցելու ԱՀՈՒ դասընթացների, որոնք կազմակերպվում են գործընկեր

կազմակերպությունների և արտադրական հաստատությունների հետ համագործակցությամբ: Սակայն քոլեջի կրթական ծրագրերում առկա են որոշ բացեր, որոնք բարելավում են պահանջում. Նախ՝ արդի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կրթական ծրագրերի թարմացման անհրաժեշտությունը, ապա նաև՝ ուսումնական պլաններում ուսանողակենտրոն ուսուցման և նորարարական մեթոդների ընդգրկումը: Բացի այդ, կրթական ծրագրերի գնահատման և արդյունավետության վերահսկման հստակ մեխանիզմների ստեղծումը կօգնի քոլեջին առավել հաջողությամբ համապատասխանել աշխատաշուկայի պահանջներին:

Քոլեջի մասնագիտական կրթական ծրագրերը կազմված են պետական կրթական չափորոշիչների հիման վրա, մոդուլային ծրագրերի համար սահմանված են արդյունքներ, կատարման չափանիշներ: Քոլեջի շրջանավարտների մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները գործատուների համար հիմնականում ընդունելի են, այլ խնդիր է, որ տարածաշրջանում քիչ են համապատասխան աշխատատեղերը, մասնագետների վարձատրությունը ցածր է: Փորձագիտական խումբը կարծում է, որ իրականացնելով աշխատաշուկայի համակարգված մշտադիտարկումներ, ընդլայնելով համագործակցությունը պետական, համայնքային կառույցների և գործատու կազմակերպությունների հետ, կատարելով խորը վերլուծություն՝ հնարավոր է հիմնավորված որոշել, թե ինչպես արդիականացնել առկա ծրագրերը, ինչպիսի նոր կրթական ծրագրեր են անհրաժեշտ, որոնք ուղղված կլինեն տարածաշրջանի զարգացման կարիքներին: Կրթական ծրագրերի համեմատական վերլուծությունը համանման ծրագրերի հետ ևս կարևոր է՝ քոլեջում գյուղանտնտեսության կրթության ոլորտի լավագույն փորձի տեղայնացման համար: Քոլեջում իրականացվող ԱՀՈՒ կրթական ծրագրերի արդյունքների գնահատումը կարող է նպաստել կրթության տեսական և գործնական բաղադրիչների սերտ կապին՝ ուսումնառողին փոխանցելով այնպիսի կարողունակություններ, որով նա անմիջականորեն կարող է հետաքրքրել գործատուին. այս մոտեցումը կարևոր է նաև գործատուների հետ համագործակցության խորացման և ընդլայնման համար:

Քոլեջում դասավանդում են համապատասխան որակավորում և մանկավարժական փորձառություն ունեցող դասախոսներ, դասավանդողների երիտասարդացման միտում է նկատվում: Ներգրավված են նաև գործատու դասախոսներ: Փորձագիտական խումբը նկատում է, որ պոտենցիալ գործատուների շրջանում հիմնականում թույլ է համագործակցության ձգտումը. նրանց

տնտեսությունները որպես կանոն մեծ չեն, մասնագիտական որակավորում ունեցող կադրերի համար մեծ թվով աշխատատեղեր առաջարկել չեն կարող:

Քոլեջում դասախոսական կազմի պարբերական գնահատման մեխանիզմների ներդրումը հնարավորություն կտա գնահատել դասախոսների կարիքները և կարողությունները: Դասախոսների գնահատման արդյունքների հիման վրա մասնագիտական զարգացման միջոցառումների պլանավորումը կնպաստի դասախոսական կազմի կարողությունների զարգացմանը և դասավանդման արդյունավետության բարձրացմանը:

Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջում հետազոտության ոլորտը դեռևս զարգացման փուլում է և ունի զգալի բարելավման հնարավորություններ: Հետազոտական ծրագրերի համակարգված իրականացումը և դրանց արդիականացումը դեռևս պահանջում են ուշադրություն և ներդրում: Հետազոտությունների որակի և արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է ներդնել հետազոտական աշխատանքների պլանավորման և իրականացման ռազմավարություններ, որոնք կնպաստեն ուսանողների և դասախոսների հետազոտական գործունեության ակտիվացմանը:

Քոլեջի արտաքին կապերի և միջազգայնացման ոլորտում նույնպես առկա են զարգացման որոշակի հնարավորություններ: Քոլեջը կարևորում է միջազգային կապերի ստեղծումը և ընդլայնումը՝ հետազոտական գործունեությունը բազմազանեցնելու համար: Այնուամենայնիվ, առկա միջազգային համագործակցությունները և արտաքին կապերը դեռևս սահմանափակ են, և կարիք կա դրանց ընդլայնման ու խորացման: Միջազգայնացմանը նպաստող քայլերից մեկը կարող է լինել անգլերենի դասընթացների ուժեղացումը և միջազգային կապերի ապահովման համար անհրաժեշտ միջկրթական հմտությունների զարգացումը: Կարևոր է նաև ներգրավվել միջազգային նախագծերում, ինչպիսիք են Erasmus+ և այլ համանման ծրագրեր, որոնք աջակցում են գիտելիքի փոխանակմանն ու կրթական միջավայրի բարելավմանը: Այս ջանքերը կնպաստեն քոլեջի հեղինակության բարձրացմանը, ուսանողների և դասախոսների մասնագիտական աճին և միջազգային կրթական համայնքում ներգրավվածության մակարդակի բարձրացմանը:

Քոլեջում ներդրված և կիրառվող թափանցիկության և հաշվետվողականության մեխանիզմները կարիք ունեն լավարկման: Ներկայումս դրանք շահակիցներին չեն տալիս ամբողջական պատկերացում Քոլեջի գործունեության արդյունավետության մասին, չեն նպաստում հասարակության

շրջանում ուսումնական հաստատության ճանաչմանը և վարկանիշի բարձրացմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը, փորձելով դիտարկել տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորությունները, վտանգներն ու ռիսկերը, ընդհանուր առմամբ ձեռնարկում է քայլեր զարգացման ուղղությամբ՝ կարևորելով պոտենցիալ դիմորդների հետ իրականացվող աշխատանքները, ուսանողների թվի աճը, կրթական ծրագրերի արդյունավետ իրականացումը, արտաքին կապերի ընդլայնումը և միջազգային համագործակցության անհրաժեշտությունը:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. Ներքին շահակիցների ընդգրկվածությունը որոշումների կայացման գործընթացում:
2. Ուսումնառության նյութերի և առաջադրանքների փաթեթների առկայությունը բոլոր կրթական ծրագրերի և մոդուլների համար:
3. Քոլեջի՝ պետական ատեստավորման քննությունը գործատուի միջավայրում կազմակերպելու և ուսանողի գործնական կարողությունն աշխատանքային միջավայրում գնահատելու փորձառությունը («Անասնաբուժություն» ՄԿԾ-ի շրջանակներում):
4. Որոշ կրթական ծրագրերում գործատու-դասախոսների ներգրավվածությունը, որն ապահովում է ուսանողներին աշխատանքային միջավայրից եկող պրակտիկ առաջադրանքների տրամադրմանը:
5. Դասախոսական կազմի երիտասարդացման միտումը:
6. Լաբորատորիաների և լսարանների տեխնիկական հագեցվածությունը և սարքավորումներով ապահովվածությունը բոլոր կրթական ծրագրերի համար:
7. Դիմորդների ներգրավման գործուն մեխանիզմները և ուսանողների քանակի շարունակական աճը:
8. Նոր համագործակցության պայմանագրերը և գործընկեր կազմակերպությունների ներգրավվածության մեծացումը կրթական ծրագրերում:

Հաստատության թույլ կողմերն են.

1. Ռազմավարական նպատակների ձևավորման, ռազմավարության գնահատման և իրականացված աշխատանքների վերլուծության

գործընթացներում արտաքին շահակիցների մասնակցության բացակայությունը:

2. Կարճաժամկետ և երկարաժամկետ պլանավորման միջև փոխկապակցվածության բացակայությունը:
3. Որակի ապահովման համակարգի ոչ լիարժեք ներդրումը և տվյալների հավաքագրման մեխանիզմների անկատարությունը:
4. Լաբորատոր աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ ռեսուրսների պլանավորման բացակայությունը:
5. Պրակտիկայի նկատմամբ վերահսկողության պակասը և բարելավման մեխանիզմների անկատարությունը:
6. ԱՀՈՒ ուսանողի հաշվետվությունների նկարագրական լինելը, որը չի արտահայտում ուսանողի մասնագիտական զարգացումը կամ ուսումնական ընթացքում առաջ եկող խնդիրները կազմակերպությունում:
7. ԱՀՈՒ կրթական ծրագրերի մշտադիտարկման մեխանիզմների ոչ լիարժեք կիրառումը և կրթական ծրագրերի բարելավման դանդաղ տեմպը:
8. Ուսանողի գնահատման չափանիշների անկատարությունը:
9. Որոշ դասախոսների գերծանրաբեռնվածությունը:
10. Շրջանավարտների մասնագիտական զբաղվածության ցածր մակարդակը:
11. Դասախոսական կազմի մոտիվացիայի պակասը հետևելու մասնագիտական ոլորտի նորարարություններին, զարգացումներին և միջազգային փորձին:

Խորհրդատվություններ.

Տվյալահենք կառավարում

1. Ռազմավարական պլանում սահմանել նպատակների և հիմնախնդիրների ձեռքբերումները գնահատող արդյունավետության ցուցանիշներ, մշակել հստակ ժամանակացույց գործողությունների իրականացման համար, սահմանել պատասխանատուներ յուրաքանչյուր գործողության համար, պլանավորել ֆինանսական ռեսուրսները:
2. Խթանել արդյունավետ համագործակցությունը Քոլեջի ստորաբաժանումների միջև՝ մշակելով և ներդնելով համագործակցության մեխանիզմներ:
3. Բոլոր ստորաբաժանումների կարճաժամկետ պլանավորուման և հաշվետվողականության հիմքում դնել Քոլեջի ՌԾ-ն և վերջինիս իրականացման պլան ժամանակացույցը:

4. Նախաձեռնել և ապահովել Քոլեջի ղեկավար կազմի և ՈՆԱ պատասխանատուի մասնակցությունը որակի ապահովման թեմայով վերապատրաստումների՝ ՈԱ մշակույթի և համակարգի ճիշտ ընկալման և արդյունավետ կիրառման նպատակով:
5. ՈՆԱ պատասխանատուի հաշվետվությունը փոխկապակցել ստորաբաժանման աշխատանքային պլանի հետ՝ ապահովելով հստակ կապ նպատակների և արդյունքների միջև, դարձնելով դրանք ավելի վերլուծական, ներառելով խնդիրների լուծման կոնկրետ առաջարկներ:
6. Բարելավել տվյալների հավաքագրման մեխանիզմները, վերանայել հարցաթերթիկների բովանդակությունը՝ ներառելով խնդիրներ վերհանող հարցեր, մշակել հարցումների արդյունքների վերլուծության մեթոդաբանություն՝ ապահովելով տվյալահենք որոշումների կայացումը:
7. Ներդնել մարդկային ռեսուրսների կառավարման նոր համակարգ, ներառյալ՝ աշխատակիցների կատարողականի գնահատման, մասնագիտական զարգացման և խրախուսման մեխանիզմներ:

Որակավորումների արժանահավատ շնորհում

1. Ապահովել, որ նախքան ուսումնառությունը գործատուի միջավայրում (նամանանավանդ «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» մասնագիտության) ուսանողները հնարավություն ունենան առավել շատ լինել ուսումնական լաբորատորիաներում, իսկ գործատուի մոտ ուսուցումը կազմակերպվի փոքր խմբերով՝ ապահովելով բոլոր ուսանողների համահավասար աշխատանքը գործատուի միջավայրում և առավել արդյունավետ հետադարձ կապ:
2. Վերանայել ԱՀՈՒ ուսանողի հաշվետվության ձևաչափը՝ հնարավորություն ընձեռելով ներկայացնել ձեռք բերված գործնական կարողություններն ու հմտությունները:
3. Ապահովել ԱՀՈՒ ուսուցման շրջանակներում ներդրված գնահատման չափանիշների և մեխանիզմների լիարժեք կիրառումը:
4. Պլանավորել յուրաքանչյուր ՄԿԾ-ի և ԱՀՈՒ-ի համար անհրաժեշտ ռեսուրսները՝ ապահովելով լաբորատորիաների պատշաճ համալրումը, հաշվարկելով լաբորատոր աշխատանքների իրականացման համար նյութական և ֆինանսական ռեսուրսները:

5. Ընդլայնել ուսումնառության ռեսուրսները՝ համալրելով գրադարանային ֆոնդը անհրաժեշտ մասնագիտական գրականությամբ, ապահովելով էլեկտրոնային գրադարանների հասանելիություն:
6. Վերանայել և բարելավել ՄԿԾ-ների մշտադիտարկման մեխանիզմները՝ գործընթացում ներգրավելով ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցների՝ ապահովելով խորքային տվյալների դուրսբերում և վերլուծություն:
7. Գնահատել ԱՀՈՒ-ի արդյունավետությունը՝ իրականացնելով բենչմարքինգ այլ ՄՈՒՀ-երի հաջողված կրթական ծրագրերի հետ՝ դիտարկելով նաև միջազգային փորձը:
8. Վերհանել դասավանդողների մասնագիտական կարիքները և կազմակերպել թիրախավորված մասնագիտական վերապատրաստումներ՝ գնահատելով վերապատրաստումների արդյունավետությունը:
9. Քայլեր ձեռնարկել ֆինանսական մուտքերի բազմազանեցման ուղղությամբ:
10. Կրթական ծրագրերի մշտադիտարկման և որակի ապահովման գործընթացում ներգրավել ինչպես տվյալ ՄԿԾ-ի մասնագետ դասախոսներին, այնպես էլ շահակիցների լայն շրջանակ:

Երկարաժամկետ զարգացում

1. Սահմանել հետազոտության հստակ ուղղություններ քոլեջի մասնագիտությունների շրջանակներում՝ հաշվի առնելով նաև գործատուների կարիքները:
2. Ներդնել դասախոսների խրախուսման համակարգ՝ հետազոտական և ուսումնամեթոդական աշխատանքների իրականացման և հրապարակման համար:
3. Սահմանել հետազոտական, ինքնուրույն աշխատանքների թեմաներ՝ ներառելով նեղ մասնագիտական հիմնահարցերի վերլուծության առաջադրանքներ, որոնք կնպաստեն ուսանողների ստեղծագործական/քննադատական մտածողության զարգացմանը:
4. Արդիականացնել քոլեջի պաշտոնական կայքը և բարձրացնել տեսանելիությունը սոցիալական հարթակներում՝ ներգրավելով համակարգչային գիտելիքներ ունեցող ուսանողների, ապահովելով համակողմանի տեղեկատվություն շահակիցների համար:

5. Մշակել և իրականացնել անգլերենի ուսուցման ծրագրեր դասախոսների և ուսանողների համար՝ գնահատելով դասընթացների արդյունավետությունը:
6. Կազմակերպել պարբերական հանդիպումներ տարածաշրջանի գործատուների հետ՝ ամրապնդելով ՄՈՒՀ-գործատու կապը:
7. Վերլուծել շրջանավարտների զբաղվածության ցածր ցուցանիշների հիմնական պատճառները՝ քայլեր ձեռնարկելով զբաղվածության ցուցանիշների բարելավման ուղղությամբ:
8. Ապահովել ՈւԽ-ի գործունեության անկախությունը՝ մշակելով և ներդնելով ուսանողական ինքնավարության խթանման մեխանիզմներ:
9. Դիտարկել շուկայի պահանջարկի հիման վրա կարճաժամկետ դասընթացների և վերապատրաստումների իրականացման հնարավորությունը՝ ապահովելով լրացուցիչ ֆինանսական մուտքեր:

Արմեն Հարությունյան
Փորձագիտական խմբի ղեկավար
03.12.2024թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

Արմեն Հարությունյան, ԵԹԿՊԻ պրոռեկտոր, արվեստագիտության թեկնածու, դոցենտ, փորձագիտական խմբի ղեկավար,

Ելենա Մարտիրոսյան, Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնի ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրեն, փորձագիտական խմբի անդամ,

Նարինե Հովհաննիսյան, ՀԱԱՀ դասախոս, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, փորձագիտական խմբի անդամ,

Ինգա Հարությունյան, Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի «Դեղագործություն» մասնագիտության ուսանող, ուսանող-փորձագետ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ հասարակության հետ կապերի պատասխանատու **Հայկուհի Բարսեղյանը:**

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում՝ համակարգողը, ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

ԳՊԳՔ-ն պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար 2024թ. փետրվարի 1-ին ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով: ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո (19.02.2024թ.) ԳՊԳՔ և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատությունների՝ ինքնավերլուծություն իրականացնելու կարողությունների պակասը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման կարևորությունը՝ ՈԱԱԿ–ը փետրվար ամսին 4-օրյա առցանց աշխատաժողովներ է իրականացրել: Աշխատաժողովների ընթացքում հավատարմագրվող ուսումնական հաստատություններին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները ՄԿՈՒ հաստատությունների համար, ինստիտուցիոնալ հավատարմագրման հարցաշարը, ինքնավերլուծության ձևաչափը, SWOT վերլուծության իրականացման սկզբունքները և այլն:

Քոլեջին ընթացիկ աջակցություն տրամադրելու և ընթացիկ հարցերին պատասխանելու նպատակով կազմակերպվել են նաև միջանկյալ հանդիպումներ:

Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջն ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացվել է 03.05.2024թ.: Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության աշխատակիցների՝ ղեկավար կազմի, վարչական, դասախոսական և ուսումնաօժանդակ համակազմի կողմից:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց:

Նախնական այց

Սեպտեմբերի 5-ին առցանց հանդիպում է տեղի ունեցել ԳՊԳՔ ղեկավար կազմի հետ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը: Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել սեպտեմբերի 16-18-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ, մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Առաջնորդվելով Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, ինչպես նաև դասալսումներ, ռեսուրսերի դիտարկում և այլն: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրերի պատասխանատուների, դասավանդող դասախոսների և ուսանողների հետ:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ: Նախնական զեկույցը տրամադրվել է քոլեջին 18.11.2024թ.: Նախնական փորձագիտական զեկույցի վերաբերյալ Քոլեջը դիտարկումներ չի ունեցել, որից հետո համակարգողը վերջնականացրել է փորձագիտական զեկույցը և տրամադրել Քոլեջին 03.12. 2024թ.:

Հայկուհի Բարսեղյան
Համակարգող
03.12.2024թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր: «Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի առաքելությունը ձևակերպված է 2021-2026թթ. ռազմավարական ծրագրում: Անհրաժեշտ է նշել, որ առաքելությունը բաղկացած է երեք հիմնական կետերից, որոնք շարադրված են բավականին ընդարձակ: Ըստ փորձագիտական խմբի՝ Քոլեջի առաքելությունն ունի հետևյալ շեշտադրումները.

- Տարածաշրջանի առանձնահատկություններին համապատասխան գյուղատնտեսության ոլորտի կամ վերջինիս աջակցող մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումը,
- Գործատուների պարտականությունների բարեխիղճ կատարումը, ինչպես նաև դասախոսների, վարչատնտեսական աշխատակիցների և ուսանողների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը,
- Ուսանողակենտրոն ուսուցման կազմակերպումը, կիրառական գիտելիքի ձևավորումը և ուսումնառության նորարարական միջավայրի ստեղծումը՝ հասարակական պատասխանատվության բարձրացման և որակի շարունակական բարելավման միջոցով:

Փորձագիտական խումբը նշում է, որ ներկայացված առաքելությունը լիովին չի արտահայտում Քոլեջի առանձնահատուկ դերը և նպատակը գյուղատնտեսական կրթության ոլորտում: Առաքելության մեջ ներառված են նաև առանձին հարցեր, ինչպիսիք են «գործատուի պարտականությունների բարեխիղճ կատարումը» և «ուսանողների իրավունքների պաշտպանությունը», որոնք բնականոն են բոլոր ուսումնական հաստատությունների համար և կարգավորվում են ներքին քաղաքականություններով և ընթացակարգերով:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թե՛ ներքին, թե՛ արտաքին շահակիցները կարևորում և ընդունում են քոլեջի առաքելությունն ու ռազմավարական նշանակությունը՝ ընդգծելով նրա դերը որպես տարածաշրջանում գյուղատնտեսական և այլ ոլորտների միջին և նախնական մասնագիտական կադրերի պատրաստման կարևորագույն հաստատություն:

Քոլեջը կրթություն է կազմակերպում ՀՀ ՈԱԾ-ի 4-րդ և 5-րդ մակարդակներին համապատասխան նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մակարդակներում: Իրականացվում են 6 կրթական ծրագրեր հետևյալ ուղղություններով՝ «Ֆինանսներ», «Հաշվապահական հաշվառում», «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում», «Անասնաբուժություն», «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա», «Համակարգիչների շահագործում»:

Քոլեջի ռազմավարական ծրագրով սահմանված է ուսումնական հաստատության տեսլականը, գործունեության հիմական սկզբունքները, հիմնարար արժեքները, ինչպես նաև 9-ը ռազմավարական հիմնախնդիրները (նպատակները): Ռազմավարական ծրագրի հիմնախնդիրները ներառում են՝ ընդունելության կառավարման բարելավումը, ուսումնական ծրագրերի մշտադիտարկումը, ներքին որակի ապահովման կատարելագործումը, դասախոսական կազմի զարգացումը, կրթական միջավայրի գրավչության բարձրացումը, ուսանողներին մատուցվող ծառայությունների որակի ապահովումը, տեղեկատվական ռեսուրսների արդյունավետության ավելացումը, ֆինանսական ռեսուրսների կառավարման օպտիմալացումը և կառավարման ընդհանուր արդյունավետության բարձրացումը: Նշված ռազմավարական ուղղությունների իրականացման նպատակով Քոլեջը կազմել է պլան-ժամակակացույց, որտեղ նշված են ռազմավարական ծրագրով սահմանված հիմնախնդիրները, դրանք բացահայտող խնդիրները, ինչպես նաև խնդիրներին ուղղված գործողությունները, վերջնաժամկետները, պատասխանատուներ/կատարողները, նախատեսվող ռեսուրսները: Փորձագիտական խումբը նշում է, որ բացառությամբ մեկ-երկու գործողության համար սահմանված վերջնաժամկետների, բոլոր գործողությունների համար սահմանված է ռազմավարական ծրագրի գործողության ողջ ժամկետը՝ 2021-2026թթ.: Ինչ վերաբերում է ռեսուրսներին, անհրաժեշտ է նշել, որ այդ բաժնում հիմնականում նշումներ առկա չեն, բացառությամբ որոշ գործողությունների, որտեղ նշվում է «Քոլեջի բյուջե/արտաբյուջե»: Անհրաժեշտ է նաև նշել, որ և ՌԾ-ում, և դրան կից պլան-ժամանակացույցում բացակայում են արդյունքների ձեռքբերման գնահատման առանցքային քանակական և որակական ցուցանիշները:

Միևնույն ժամանակ, Քոլեջն ունի 2022թ., 2023թ., 2024թ. համար հաստատած ռազմավարական ծրագրի գործողությունների կատարման տարեկան պլաններ, որոնք նախատեսում են ըստ հիմնախնդիրների իրականացվելիք գործողություններ, կատարման ժամանակահատված, պատասխանատու, անհրաժեշտ ռեսուրսներ, վերջնարդյունք, գործունեության առանցքային ցուցիչ: Անհրաժեշտ է նշել, որ

վերջնարդյունքներն ու ԳԱՑ-երը երբեմն նույն ձևակերպումներն ունեն։ Փորձագիտական խումբն արձանագրում է, որ տարեկան պլանները, եզակի բացառություններով, նույնությամբ կրկնվում են բոլոր տարիների համար, ընդ որում՝ 5-ամյա պլանի խնդիրները կամ գործողություններն այստեղ կոչվում են քայլեր, ֆինանսական ռեսուրսների հստակությունը կրկին բացակայում է։ Ինչ վերաբերում է արդյունքների ապահովման պատասխանատուներին, ապա անհրաժեշտ է նշել, որ երբեմն դրանք հստակ ձևակերպված չեն, օրինակ՝ 2023թ. պլանի «Երիտասարդ դասախոսների մասնագիտական և մեթոդական աճի բարձրացում» քայլի պատասխանատուները հենց երիտասարդ դասախոսներն են։

Ըստ 2017թ. հաստատած Քոլեջի շահակիցների կարիքների ուսումնասիրության և գնահատման քաղաքականության՝ հաստատության ներքին շահակիցներն են ուսանողները, դասախոսական և ուսումնաօժանդակ կազմը, իսկ արտաքին շահակիցներն են դիմորդները, շրջանավարտները, գործատուները, հասարակությունը և պետական մարմինները։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջի ռազմավարական ծրագրի մշակումը իրականացվել է հիմնականում ներքին շահակիցների կարիքների վերհանման հիման վրա։ Աշխատանքային խումբը, հիմնվելով նախորդ ռազմավարական ծրագրի կատարողականի վերլուծության վրա, ներկայացրել է նոր նախագիծը։ Սակայն արտաքին շահակիցների դերակատարումը այս գործընթացում գրեթե տեսանելի չէ։ Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ արտաքին շահակիցների ներգրավվածությունը ռազմավարական ծրագրի մշակման գործընթացում ապահովելը նշվել է նաև նախորդ հավատարմագրման փորձագիտական խորհրդատվություններում, որը չի իրականացվել։

Ինչ վերաբերում է Ռազմավարական ծրագրի ընթացիկ գնահատմանը և մշտադիտարկմանը, ապա անհրաժեշտ է նշել, որ դրա մեխանիզմը հիմնականում ստորաբաժանումների և տնօրենի տարեկան հաշվետվություններն են։ Վերջիններիս ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք լիարժեքորեն փոխկապակցված չեն ուսումնական հաստատության ռազմավարական ծրագրին։ Տնօրենի հաշվետվության մեջ հաճախ առկա են ընդհանրական և նկարագրողական ձևակերպումներ։ Տնօրենի 2023թ. հաշվետվության մեջ նշված է, որ «Գործողությունների պլան-ժամանակացույցը կատարված է 90%-ով», սակայն փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գնահատման ստույգ մեխանիզմների բացակայության, մասնավորապես՝ գնահատման քանակական ցուցիչների բացակայության պարագայում, նշված ցուցանիշի ձևավորման հիմքեր առկա չեն։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջն ունի սահմանված առաքելություն, որտեղ շեշտադրված են ուսանողակենտրոն ուսուցումը, նորարարական միջավայրի ձևավորումը, գյուղատնտեսական ոլորտի կրթական ծրագրերի իրականացումը, ինչը նպաստում է տարածաշրջանի կրթական պահանջների բավարարմանը: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը կարիք ունի շարադրանքի տեսանկյունից առավել պարզեցնելու իր առաքելությունը՝ բխեցնելով Քոլեջի առանձնահատկություններից, ինչը հնարավորություն կընձեռի թե ներքին, թե արտաքին շահակիցներին ամբողջովին ընկալելու քոլեջի գործունեության հիմնական նշանակությունը:

Դրական է, որ Քոլեջի ռազմավարական ծրագիրը հաշվի է առնում ներքին շահակիցների կարիքները, այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ արտաքին շահակիցների ընդգրկվածությունը թույլ կտա առավել արագ արձագանքելու արտաքին միջավայրի, հասարակության և աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին, ինչը կնպաստի ծրագրերի ամբողջականությանը և արդյունավետությանը:

Դրական է, որ քոլեջն ունի ռազմավարական ծրագիր և դրա իրականացման պլան-ժամանակացույց, որն ուղղված է կրթական գործընթացների կատարելագործմանը և որակի շարունակական բարձրացմանը: Սակայն ռազմավարական կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է կատարել որոշակի հստակեցումներ: Մասնավորապես, ռազմավարական ծրագրի մշտադիտարկման և գնահատման նպատակով կարևոր է ներդնել հստակ սահմանված քանակական և որակական ցուցանիշներ, ինչպես նաև որոշել հստակ ժամկետներ և պատասխանատուներ, ինչը հնարավորություն կտա գնահատել ծրագրի իրականացման ընթացքը և արդյունքները:

Ռազմավարական ծրագրի արդյունավետության գնահատմանը կնպաստի նաև տնօրենի և ստորաբաժանումների հաշվետվությունների միասնական և համակարգային ձևաչափի ներդրումը, որը կապահովի իրականացվող գործունեության համապատասխանությունը ռազմավարական նպատակներին: Այս մոտեցումը կնպաստի ռազմավարական ծրագրի շարունակական բարելավմանը և կառավարման գործընթացների թափանցիկության բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Գավառի ակադեմիկոս Ա.Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջն ունի առաքելություն, իրականացնում է

մարզի կարիքներին ուղղված կրթական ծրագրեր, շահակիցները հիմնականում կիսում են քոլեջի առաքելությունը՝ կարևորելով վերջինիս դերակատարությունը տարածաշրջանում, ՄՈՒՀ-ն ունի ռազմավարական ծրագիր, որտեղ սահմանված են առաջնահերթություններ, ինչպես նաև առկա է վերջինիս իրականացման պլան-ժամանակացույցը, փորձագիտական խումբը գտնում է, որ Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջը համապատասխանում է չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր: «Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի ընթացիկ կառավարումն իրականացնում է կոլեգիալ կառավարման մարմինը՝ Քոլեջի խորհուրդը, և գործադիր մարմինը՝ Քոլեջի տնօրենը, որն ունի երկու տեղակալ՝ ուսումնական և կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով:

Դասախոսական և ուսանողական համակազմերի ներկայացուցիչներն ընդգրկված են Կառավարման և Տնօրենական խորհուրդներում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսներն ու ուսանողներն ակտիվորեն մասնակցում են նիստերին՝ հանդես գալով առաջարկություններով: Մինչդեռ արտաքին շահակիցների ներգրավվածությունը կառավարման գործընթացներում նկատելի չէ: Նիստերին մասնակցող ուսանողները և դասախոսները քննարկումների արդյունքների մասին իրազեկում են շահակիցներին հանդիպումների ժամանակ՝ ամբիոնների նիստերում և Ուսանողական խորհրդի շրջանակում:

Քոլեջում կանոնավոր կերպով գործում են տնօրենական և ուսումնամեթոդական խորհուրդները, որոնց գործունեությունը կարգավորվում է

համապատասխան կանոնակարգերով: Քոլեջի կառավարման կառուցվածքի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հիշյալ խորհուրդները կառուցվածում արտացոլված չեն: Ավելին, գծապատկերում Ուսանողական խորհուրդը նշված է որպես տնօրենին ենթակա կառույց:

Փաստաթղթերի ուսումնասիրության փուլում, համադրելով Քոլեջի հաստիքացուցակը և կառուցվածքը, փորձագիտական խումբն արձանագրեց, որ կառուցվածքի գծապատկերում ներկայացված չեն, օրինակ, միջին մասնագիտական կրթական ծրագրով բաժնի վարիչը, հանրակրթական ծրագրով բաժնի վարիչը, ԱՀՈՒ ղեկավարը, իրավախորհրդատուն, մանկավարժ-հոգեբանը կամ մեթոդիստը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նշված հաստիքները Քոլեջում թափուր են: Ստորաբաժանումների կամ աշխատակիցների միջև հորիզոնական ու ուղղահայաց կապերը թույլ են արտահայտված, օրինակ՝ միջամբիոնային համագործակցությունը, ամբիոնների առջև նման խնդիր դրված չէ:

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի համակարգմամբ Քոլեջում գործում են հինգ ամբիոններ՝ Տնտեսագիտական, Տեխնիկական, Հանրակրթական առարկաների, Անասնաբուժական և պարենամթերքների տեխնոլոգիաների, Համակարգչային առարկաների: Կազմակերպադաստիարակչական աշխատանքների գծով տեղակալը համակարգում է կուրսերի ղեկավարների աշխատանքը, ինչպես նաև, ըստ փորձագիտական հանդիպումների տվյալների, նրան է պատվիրակված արտաքին կապերի համակարգումը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որոշ աշխատակիցների ծանրաբեռնվածությունը մեծ է, օրինակ՝ 17 մոդուլ դասավանդող դասախոսը միևնույն ժամանակ լաբորատորիայի պատասխանատուն է, կամ կրթության որակի պատասխանատուն, ով նաև դասավանդում է, համատեղության կարգով զբաղեցնում է կադրերի բաժնի տեսուչի պաշտոնը:

2024թ. Քոլեջի կառավարման խորհրդի կողմից հաստատվել է «Ֆինանսական ռեսուրսների կառավարման և բաշխման քաղաքականություն և ընթացակարգը», որի նպատակն է իրականացնել քոլեջի ֆինանսական ռեսուրսների կառավարում և բաշխում՝ ըստ ռազմավարական առաջնահերթությունների: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ վերջին երեք տարում բյուջետային մուտքերը կազմել են 97.9% և ավելին: Արտաբյուջեն, որը հիմնականում ձևավորվում է ուսանողների վարձավճարներից, վերջին երեք տարում կազմել է 1%-2.10%: Ծախսային մասով աշխատավարձի ֆոնդը և տնտեսական ծախսերը միասին կազմում են մոտ 90%: Զարգացման ծախսերը վերջին երկու տարում կազմել են 0.01-

0.03%: Փաստաթղթերի վերլուծությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջում դեռևս չի իրականացվում ռազմավարական նպատակների իրականացմանն ուղղված ֆինանսների պլանավորում: Քոլեջի ռազմավարական ծրագրի պլան- ժամանակացույցում տեսանելի չեն ռազմավարական հիմնախնդիրներին հասնելու և պլանավորված գործողությունների իրականացման համար պահանջվող հստակ ֆինանսական միջոցներ:

Քոլեջի գործունեությունն իրականացվում է ռազմավարական՝ երկարաժամկետ, և տարեկան՝ կարճաժամկետ կամ ընթացիկ պլանավորումներով: Ստորաբաժանումների աշխատանքային պլանները կազմվում են տարեկան կարճաժամկետ պլանավորմամբ: Պլանների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ վերջիններս միտված են ընթացիկ աշխատանքներին, և համահնչեցված չեն Քոլեջի ռազմավարական հիմնախնդիրներին: Հաշվետվությունները չեն պարունակում վերլուծություններ, օրինակ՝ Կարիերայի ստարաբաժանման 2022-2023 ուսումնական տարվա աշխատանքային պլանում նախատեսված է ուսանողների կրթական և աշխատանքային հետագծերի վերաբերյալ վիճակագրության վարում և տվյալների ներկայացում, սակայն հաշվետվության մեջ նման տեղեկատվություն առկա չէ, փոխարենը ներկայացված է տեղեկատվություն իրականացված ընթացիկ միջացառումների մասին: Անհրաժեշտ է նաև նշել, որ հաշվետվությունները հետագա բարելավումների առաջարկություններ չեն պարունակում:

Քոլեջի կողմից իր գործունեության վրա ազդող արտաքին և ներքին գործոնների համակարգային ուսումնասիրություններ և վերլուծություններ հիմնականում չեն իրականացվում: Քոլեջն իրականացնում է աշխատանքի վրա հիմնված երկու կրթական ծրագրեր, սակայն չի իրականացնում լիարժեք ուսումնասիրություններ և վերլուծություններ այն գործոնների վերաբերյալ, որոնք կարող են խոչընդոտել գործընթացի իրականացմանը. չեն ուսումնասիրվում, օրինակ, ոլորտային տնտեսությունների արտադրական գործընթացները, փուլերը, ինչը հիմք կհանդիսանար ԱՀՈՒ ուսուցման գործնական պարապմունքների կազմակերպմանը և ուսանողների պրակտիկ մասնակցության ապահովմանը: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ ԱՀՈՒ ուսուցման արդյունավետության տվյալների հավաքագրման համար մշակված են համապատասխան ձևաչափեր, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, դրանց կիրառումը լիարժեք չէ, ինչի հետևանքով խնդիրների բացահայտման և վերլուծման գործընթացն ամբողջովին տեղի չի ունենում: Նաև նկատելի է, որ քոլեջը երբեմն հավաքագրում է խնդիրներ վերհանող տվյալներ, սակայն այդ ուղղությամբ հստակ որոշումներ չեն կայացվում: Օրինակ՝ ՄՈՒՀ-ն ուսումնասիրել է, որ ուսանողները վերջին տարիներին ցածր

առաջադիմություն են գրանցում, սակայն այս խնդրի ուղղությամբ հստակ որոշումներ առկա չեն։

Քոլեջի նախորդ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացում փորձագիտական խումբը ՄՈՒՀ-ին խորհրդատվություն է տրամադրել՝ ներդնել որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլը։ Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ Քոլեջն ունի նախորդ հավատարմագրումից հետո ներդրված և մինչ այդ հաստատված մի շարք փաստաթղթեր, որոնք իրենց լիարժեք կիրառությունը չեն գտել կամ վերանայման կարիք ունեն, սակայն ընթացիկ չեն գնահատվել, ապա՝ բարելավվել, օրինակ՝ «Բենչմարքինգի քաղաքականություն և ընթացակարգը» (հաստատված 2017թ.), «Գործավարության կանոնակարգը» (հաստատված 2013թ.) և այլն։ Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ Քոլեջը 2019թ. իրականացնում է ԱՀՈՒ կրթական ծրագրեր, սակայն մինչև օրս վերջիններս լիարժեքորեն և համակարգային ձևով չեն գնահատվել, և բարելավումների հիմքում ընկած չեն եղել վերլուծությունները։

Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջն ունի կայքէջ և ֆեյսբուքյան էջ: Պաշտոնական կայքէջում հրապարակված են ուսումնական հաստատության ռազմավարական ծրագիրը, կանոնադրությունը, կարգեր և կանոնակարգեր, ուսումնական հաստատության 2023թ. ըստ մասնագիտությունների հաստատված մասնագրերը: Փորձագիտական խումբը նշում է, որ շրջանավարտների հաջողության պատմություններ, զբաղվածության ցուցանիշներ և այլ տեղեկատվություն կայքէջում հրապարակված չէ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Քոլեջում գործում են մի շարք խորհուրդներ, որոնք ապահովում են դասախոսական և ուսանողական կազմերի ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացում։ Սա նպաստում է Քոլեջի ներսում համագործակցության ամրապնդմանը և որոշումների կայացման մասնակցայնության բարձրացմանը: Այնուամենայնիվ, կառավարման գործընթացներում արտաքին շահակիցների ներգրավման պասիվությունը կարող է սահմանափակել աշխատաշուկայի կամ արտաքին ազդակների դիտարկման և գնահատման հնարավորությունը:

Փորձագիտական խումբը նշում է, որ Քոլեջն ունի կառուցվածքը վերանայելու, գործող բոլոր կառացվածքային միավորները կառուցվածքում արտահայտելու անհրաժեշտություն, որը կնպաստի կառավարման գործընթացների

թափանցիկության ապահովման և կխթանի աշխատանքային փոխհարաբերությունների արդյունավետության բարձրացմանը:

Ինչ վերաբերում է մարդկային ռեսուրսներին և որոշ պաշտոնների թափուր լինելուն, ապա անհրաժեշտ է նշել, որ թափուր հաստիքները կարող են խոչընդոտել կրթական ծրագրերի զարգացմանն ու դրանց արդյունավետության բարձրացմանը: Փորձագիտական խումբը շեշտադրում է հատկապես ԱՀՈՒ ծրագրերի պատասխանատուի բացակայությունը, հաշվի առնելով, որ այդ ծրագրերը պահանջում են մանրամասն պլանավորում, իրականացում և հետագա գնահատում, որը ներկա փուլում ՄՈՒՀ-ի համար որոշակիորեն խնդրահարույց է: Այս պաշտոնի թափուր լինելը կարող է բացասական ազդեցություն ունենալ Քոլեջում աշխատանքի վրա հիմնված ուսուցման կայացման վրա:

Թեև Քոլեջի կողմից հաստատվել է «Ֆինանսական ռեսուրսների կառավարման և բաշխման քաղաքականությունը», այնուամենայնիվ ռազմավարական նպատակների ֆինանսավորման պլանավորումը լիարժեք կերպով չի իրականացվում: Ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարման բացակայությունը և ռեսուրսների բաշխման ու ռազմավարության միջև կապի թույլ լինելը կարող են խոչընդոտել հաստատության ռազմավարական նպատակների իրականացումը:

Փորձագիտական խումբն ընդգծում է, որ ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրության և համակարգված տվյալների պակասը խոչընդոտում է առկա պլանավորումների վերանայմանն ու ընթացակարգերի բարելավմանը, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ հատկապես ուսանողների մասնագիտական կարողությունների զարգացման տեսանկյունից, ինչպես նաև ազդել ՄՈՒՀ-ում ԱՀՈՒ կրթական ծրագրերի արդյունավետ ներդրման և կայացման վրա: Հիմնարար վերլուծությունները կնպաստեն առկա խնդիրների վերհանմանը և համապատասխան լուծումների առաջադրմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը նախևառաջ պետք է արդյունավետ կերպով կիրառի իր առկա ձևաչափերը՝ ապահովելով նաև դրանց շարունակական բարելավումը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ նախորդ ինստիտուցիոնալ հավատարմագրման արդյունքներով ստացված խորհրդատվությունը՝ ՊԻԳԲ շրջափուլի լիարժեք իրականացումը, հնարավորություն կընձեռեր կարգավորելու Քոլեջի կառավարման և վարչարարության մոտեցումները: Քոլեջում առկա հիմնական գործընթացները ներկայումս գտնվում են իրագործման փուլում: Գնահատման գործընթացի ոչ լիարժեք իրականացումը խոչընդոտում է բազմաթիվ ներքին նորմատիվ փաստաթղթերի անհրաժեշտությանը և կիրառելիությանը, ինչը

սահմանափակում է դրանց արդյունավետ օգտագործումը: Նույնը վերաբերում է նաև ներդրված ԱՀՈՒ համակարգին. գնահատման գործընթացը թույլ կտար դուրս բերել ընթացիկ խնդիրները և վերլուծված տվյալների վրա կայացնել որոշումներ, որոնք կապահովեին ուսուցման շարունակական բարելավումը:

Փորձագիտական խումբը մատնանշում է, որ Քոլեջը կարող է էապես նպաստել հասարակության շրջանում իրազեկվածության բարձրացմանը՝ հրապարակելով շնորհվող որակավորումների, շրջանավարտների զբաղվածության ցուցանիշների և հաջողության հասած շրջանավարտների կարիերայի ուղիների վերաբերյալ տեղեկատվություն: Այս գործընթացը ոչ միայն կդառնա ուսումնական ծրագրերի արդյունավետության ցուցիչ, այլև կբարձրացնի վստահությունը ուսումնական հաստատության կրթական ծրագրերի նկատմամբ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ ինստիտուցիոնալ համատարմագրման արդյունքում ստացված խորհրդատվությունների հիման վրա Քոլեջը կառավարման գործընթացում հիմնականում չի արձանագրել շոշափելի հաջողություններ, նկատելի չէ արդյունավետ ռազմավարական կառավարում, ֆինանսական քաղաքականությունը և առկա ռեսուրսների կառավարումը չի փոխկապակցվում ռազմավարական հիմնախնդիրների իրականացմանը, արտաքին շահակիցների կարիքներն ամփոփված չեն և չեն դրվում որոշումների կայացման հիմքում, որակի ապահովման համակարգի վերհանած տվյալները հիմնականում չեն դրվում կառավարչական որոշումների կայացման հիմքում, քոլեջի գործունեության վրա ազդող գործոնների համակարգված ուսումնասիրություն և վերլուծություններ չեն իրականացվում, փորձագիտական խումբը գտնում է, որ Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջը չի բավարարում չափանիշ 2-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր: Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջն իրականացնում է միջին մասնագիտական հինգ կրթական ծրագիր՝ «Անասնաբուժություն», «Ֆինանսներ», «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում /ավտոտրանսպորտում», «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա», «Հաշվապահական հաշվառում» և մեկ նախնական մասնագիտական կրթական ծրագիր՝ «Համակարգիչների շահագործում»: Կրթական ծրագրերից «Անասնաբուժություն» և «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» մասնագիտական կրթական ծրագրերը հաստատությունն իրականացնում է աշխատանքի վրա հիմնված ուսումնառության հիմքով 2019 թվականից:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հաստատությունը նախատեսում է ներդնել նաև նոր մասնագիտություններ, այդ թվում «Ջերմատնային տնտեսություն» և «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում»: Նոր մասնագիտությունների ներդրման համար հաստատությունը չունի շուկայի համակարգային վերլուծություն, ծրագրերը մեկնարկելու համար հիմք են հանդիսացել միայն Միասնական սոցիալական ծառայությունից ստացված այն տեղեկությունը, որ այդ մասնագիտությունները տարածաշրջանում պահանջարկ ունեն: «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում և սպասարկում» մասնագիտական կրթական ծրագրի համար ՄՈՒՀ-ը դիմել է ԿԳՄՍ նախարարություն լիցենզիա ստանալու նպատակով:

Քոլեջի դասախոսական կազմը մասնակցություն չի ունեցել պետական կրթական չափորոշիչների կազմման և վերանայման գործընթացներին, սակայն 2022թ. առաջարկ է ներկայացրել վերանայել «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության չափորոշիչը: Այն արդեն վերանայվել է: 2024թ. հաստատությունը ՄԿՈՒԶԱԿ-ին դիմել է «Ֆինանսներ» մասնագիտության 2013թ. ծրագիրը վերանայելու առաջարկով՝ հաշվի առնելով հարկային, սոցիալական և ֆինանսական ոլորտներում օրենսդրական փոփոխությունները, սակայն առաջարկի մեջ հստակ վերանայման ուղղություններ չեն նշվել:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ Կրթական ծրագրերի ուսումնական պլաններում հանրակրթական առարկաներից և մասնագիտական մոդուլային ծրագրերից բացի, ներառված են նաև ընտրովի և պահուստային ժամերի հաշվին ներդրված առարկաներ։ «Անասնաբուժություն» ծրագրում դասավանդվում են «Օրգանական գյուղատնտեսություն» և «Ախտաբանական անատոմիա» մոդուլները, «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում/ավտոտրանսպորտում» ծրագրում՝ «Ավտոմեքենաների հուսալիություն և նորոգում» մոդուլը, իսկ «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» ծրագրում՝ «Օրգանական գյուղատնտեսություն» մոդուլը։ Այս մոդուլները ներդրվել են դասախոսական անձնակազմի առաջարկով։ «Համակարգիչների շահագործում» նախնական մասնագիտական կրթական ծրագրում գործատուի առաջարկով ներառվել է «Ամպային տեխնոլոգիաներ» առարկան։ Իսկ 2022թ. «Հաշվապահական հաշվառում» ծրագրում ներառվել է «Աուդիտի հիմունքներ» ընտրովի մոդուլը։ Վերջինիս անհրաժեշտությունը քննարկվել է ամբիոնում և գործատուի հետ, ինչը արտացոլվել է ուսումնամեթոդական խորհրդի հաշվետվության մեջ։ Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ նույն մասնագիտական կրթական ծրագրում ըստ պետական կրթական չափորոշչի, հաշվապահ որակավորմամբ մասնագետի պարտականություններից է հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրերի կիրառումը, սակայն կրթական ծրագրում ծրագրային ապահովմանը վերաբերող, ինչպիսին է օրինակ ՀԾ-ն կամ այլ ծրագիր, ներդրված չէ։ Հաստատությունն այս ուղղությամբ քննարկումներ չի իրականացրել և որոշումներ չեն կայացվել։ Ուսանողներն էլեկտրոնային ծրագրերին ծանոթանում են միայն գործատուի մոտ պրակտիկայի ժամանակ՝ որպես դիտորդներ։

Ուսումնական պլաններում առկա են պրակտիկայի հետևյալ տեսակները՝ ուսումնական, արտադրական, նախաավարտական։ Երկրորդ կուրսից ուսումնական պլաններով նախատեսված են ուսումնական և արտադրական պրակտիկաների շաբաթները, որոնք բաշխվում են ըստ թեմատիկ պլանի ուստարվա սկզբին պրակտիկայի վարիչի կողմից։ Ըստ ուսումնական պլանի, ուսումնական պրակտիկան պետք է լինի ինչպես տեսական ուսուցմամբ, այնպես էլ առանց տեսական ուսուցման։ Վերջինիս ծածկույթը պետք է ընդգրկի բոլոր հատուկ մասնագիտական մոդուլները։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» մասնագիտության ուսանողներն ուսումնական պրակտիկայի շրջանակներում զբաղվում են ավտոմեքենայի մասերի ուսումնասիրմամբ, իսկ արտադրական

պրակտիկան ուսանողները մեծամասամբ անցնում են մեքենաների վերանորոգման կետերում և այնտեղ իրենց գործնական աշխատանքները գրեթե ամբողջությամբ վերաբերում են ավտոմեքենաների վերանորոգմանը: Մինչդեռ փորձագիտական խումբը նշում է, որ ըստ ՄԿԾ-ի ուսանողները պետք է կատարեն նաև լոգիստիկ (փոխադրման) աշխատանքներ և այլն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս ուղղությամբ գործատուներ ներգրավված չեն:

ԱՀՈՒ-ի հիմքով ՄԿԾ-ների պարագայում ձեռնարկությունում անցկացվող դասերը կազմակերպվում են՝ համաձայնեցնելով դրանք գործատուի աշխատանքային գործընթացի պլանավորման հետ: Օրինակ՝ «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» մասնագիտության ուսանողները իրենց պրակտիկան անցնում են «Գանձակ կաթ» և «Նաիրի Լենդ» տարածաշրջանի կաթնամթերք արտադրող ընկերություններում՝ մասնակցելով տվյալ ժամանակահատվածում արտադրվող կաթնամթերքի արտադրական գործընթացին: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողներն ամբողջ կուրսով այցելում են նույն ձեռնարկությունը: Գործնական դասերի անցկացման համար այցի ժամանակացույց՝ ըստ տարանջատված խմբերի, սահմանված չէ, ինչի հետևանքով առավել ակտիվ ուսանողները մասնակցում են գործնական աշխատանքներին, իսկ մյուսները հայտնվում են պասիվ դիտորդի դերում:

ՄՈՒՀ-ում դասախոսները դասը պլանավորում են նույն կառուցվածքային սխեմայով: Յուրաքանչյուր մոդուլի համար մշակվում է թեմատիկ պլան, իսկ յուրաքանչյուր թեմայի համար՝ ուսումնառության նյութեր, դասի ուսումնառության պլան, գործնական աշխատանքի թերթիկ և արդյունքների գնահատման թերթիկ, որն ընդգրկում է ուսանողին տրամադրվող առաջադրանքները: Այս կառուցվածքը կիրառվում է բոլոր մոդուլների համար: Դասավանդման մեթոդները ներկայացված են ուսումնառության արդյունքների համապատասխան աղյուսակում և ներառված են դասի ուսումնառության պլանում:

Ուսումնառության նյութերը սովորաբար ուսանողներին տրամադրվում են թղթային ձևաչափով, որոշ դեպքերում նաև առցանց: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ որոշ դասախոսներ, ինչպես օրինակ «ՀՀ Հարկային օրենսդրություն» մոդուլի դասախոսը, մշակել են համակարգչային ծրագրերի միջոցով ուսումնառության համալիր փաթեթներ: Այս փաթեթները ներառում են ուսումնառության նյութեր, առաջադրանքներ, ցուցադրվող հոլովակներ, խաղեր, հարցումներ և խաղարկային բաղադրիչներ, ինչպես նաև հետազոտական տարրերով առաջադրանքներ: Անհրաժեշտ է նշել, որ դասախոսը

կիսվել է այդ փորձով իր մյուս գործընկերների հետ, սակայն առայժմ ոչ մի մասնագետ այդ մեթոդը չի կիրառել։

Իսկ ինչ վերաբերում է դասավանդման մեթոդներին, ապա դասալսումներից պարզ դարձավ, որ դասախոսական կազմը դասի ժամանակ կիրառում է ֆրոնտալ հարցում, անհատական հարցում, խմբային աշխատանք, թեմայի ինքնուրույն ուսումնասիրման եղանակ (ռեֆերատ)։

ՄՈՒՀ-ում որպես գնահատման կարգ կիրառում են ԿԳՄՍ նախարարի կողմից 2008թ. հաստատված՝ 10-միավորային սանդղակի մեթոդական ցուցումները։ Յուրաքանչյուր մոդուլը ամփոփվում է տարբերակված ստուգարքով, կիսամյակի վերջում մոդուլները այլևս չեն ամփոփվում։

Ուսանողներին տրամադվող առաջադրանքների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ընթացիկ առաջադրանքները մեծամասամբ ստուգում են ուսանողի տեսական գիտելիքները։ Ուսումնառության արդյունքների ամփոփման համար կազմվում են գնահատման թերթիկներ, որոնք ամփոփում են մոդուլի արդյունքները «անցել է» կամ «չի անցել» սկզբունքով։ Որպես գործնական առաջադրանքներ «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» ՄԿԾ-ում ուսանողները ՄՈՒՀ-ի լաբորատորիայում ստանում են պանրի տարբեր տեսակներ՝ ըստ տեխնոլոգիական հաջորդականության։ Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը հիմնականում կենտրոնանում է պանրի պատրաստման վրա, մինչդեռ ՄԿԾ-ն ենթադրում է յոգուրտի, կաթնաշոռային արտադրանքի, կարագի պատրաստման արտադրություն և այլն։ Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողներն առավելապես լինում են պանիր արտադրող ընկերություններում, քանի որ գործատուների մեծ մասը պանրագործներ են։

«Անասնաբուժություն» կրթական ծրագրի շրջանակներում ուսանողներին լսարանում հանձնարարված առաջադրանքները առավելապես տեսական գիտելիք ստուգող են։ Իսկ ինչ վերաբերում է գործատուի կողմից ներկայացված գործնական առաջադրանքների իրականացմանը, ապա անհրաժեշտ է նշել, որ դրանք բխում են այդ պահին գործատուի մոտ առկա խնդրից, այս իմաստով ուսանողը առնչվում է տարբեր խնդիրների և դրանց լուծման եղանակների հետ, սակայն առաջադրանքների ամբողջական պլանավորում օբյեկտիվ պատճառներով դժվար է իրականացնել՝ պայմանավորված հանգամանքով, որ կենդանիների մոտ առաջացող առողջական խնդիրները հաճախ անսպասելի են և դժվար կանխատեսելի։

«Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում /ավտոտրանսպորտում» ՄԿԾ-ի շրջանակներում ուսանողներին հանձնարարվում է

լուծել խնդիրներ, հաշվարկել և պլանավորել տարբեր փոխադրումներ՝ ելնելով հստակ տեխնիկական պահանջներից։

ԱՀՈՒ ծրագրերում գործատուների մոտ իրականացվող գործնական ժամերի գնահատման գործընթացում «Անասնաբուժություն» և «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» մասնագիտությունների ուսանողները կազմում են հաշվետվություններ, որոնք ներառում են մասնագիտական գրականությունից տեսական նյութեր և աշխատանքի նկարագրություններ։ Փորձագիտական խումբը նկատել է, որ «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» մասնագիտության հաշվետվություններում գերակշռում է տեսական մասը, իսկ «Անասնաբուժություն» մասնագիտությունում՝ գործատուի մոտ իրականացրած աշխատանքի նկարագրությունները։ «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում /ավտոտրանսպորտում» մասնագիտության պրակտիկայի օրագրերում հաճախ բացակայում է գործնական աշխատանքի նկարագրությունը, այն կենտրոնացած է միայն մասնագիտական գրականությունից վերցված տեսական մասի վրա։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործատուի մոտ ուսանողի աշխատանքը գնահատելու նպատակով քոլեջի պրակտիկայի ղեկավարն իրականացնում է ընթացիկ մշտադիտարկում՝ ԱՀՈՒ մշտադիտարկման թերթիկների միջոցով։ Գործիքը նախատեսված է գնահատելու համար ուսանողի առաջընթացը, հանդիպած դժվարությունները և տալու առաջարկներ։ Սակայն լրացված նմուշների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերհանված խնդիրներ առկա չեն։ ԱՀՈՒ կազմակերպման ընթացակարգի համաձայն, յուրաքանչյուր շաբաթվա ավարտին պետք է գնահատվի ուսանողի կատարված աշխատանքը։ Նույն ընթացակարգում շարադրված են ԱՀՈՒ արդյունքների գնահատման չափանիշները։ Դրանք գնահատում են ձեռք բերված կարողությունները «կատարել է» կամ «չի կատարել» նշումով, ընդունված է նաև գնահատման տարբերակված ձևաչափը, այն է՝ սահմանված է 10-միավորային սանդղակ, որով նշված է, թե ինչ պետք է կարողանա ուսանողը «գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար» գնահատման դեպքում։ ԱՀՈՒ-ի օրագրերը ոչ ամբողջական են արտացոլում ընթացակարգով սահմանված գնահատման չափանիշները։ Անհրաժեշտ է նաև նշել, որ մյուս մասնագիտություններով պրակտիկաների գնահատման չափանիշներ ներդրված չեն։

Բոլոր կրթական ծրագրերում ուսանողները հանձնում են պետական ամփոփիչ քննություններ։ Այս ձևաչափը ընտրվել է նաև ԱՀՈՒ մասնագիտությունների համար՝ նախկինում հաստատված դիպլոմային

աշխատանքի փոխարեն։ Նման որոշում ՄՈՒՀ-ը կայացրել է՝ ելնելով այն փաստից, որ ուսանողներից շատերը չունեն հետազոտական աշխատանք գրելու կարողություն։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԱՀՈՒ հիմքով մասնագիտությունների 2023-2024 ուստարվա պետական ամփոփիչ քննությունները որոշվել է անցկացնել տնտեսությունում՝ իրական միջավայրում, տեսական և գործնական հմտությունները ստուգելու նպատակով։ ՄՈՒՀ-ը շարունակելու է կիրառել ԱՀՈՒ քննությունների այս ձևաչափը։

ՄՈՒՀ-ը մշակել է գնահատականների բողոքարկման կարգ, որը սահմանում է բողոքարկման գործընթացը։ Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողները կարող են փոխել իրենց գնահատականը տեղում, վերջինիս համար հատուկ ընթացակարգ առկա չէ, իսկ դասավանդողների պնդմամբ այդպիսի դեպքեր չեն եղել։ Գնահատականի բողոքարկման դեպքեր ևս չեն արձանագրվել։

ՄՈՒՀ-ն ունի «Բենչմարքինգի քաղաքականություն և ընթացակարգ», որը մշակվել է 2017թ.։ Քոլեջը փորձ է արել իրականացնել համեմատական վերլուծություն Գորիսի պետական գյուղատնտեսական քոլեջի ԱՀՈՒ կրթական ծրագրերի հետ՝ առցանց ձևաչափով։ Արդյունքների ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ծրագրի բովանդակության մասով ոչ մի դիտարկում արված չէ։ Երկու կողմերն իրականացրել են SWOT վերլուծություն և որպես թույլ կողմ նշել են դիմորդների և բուհական կրթություն ունեցող դասախոսների պակասը։ Փորձագիտական ուսումնասիրությունները նաև ցույց են տալիս, որ իրականացված բենչմարքինգը չի իրականացվել սահմանված ընթացակարգի համաձայն։

ՄՈՒՀ-ը մշակել է «ՄԿԾ-ների մշտադիտարկման և վերանայման կանոնակարգ», որի համաձայն ամբիոնները պետք է զբաղվեն ծրագրերի տարեկան մշտադիտարկմամբ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄԿԾ-ները յուրաքանչյուր տարի քննարկվում են ուսումնամեթոդական խորհրդում։ Իրականցվում են որոշ փոփոխություններ, սակայն խորքային մշտադիտարկում, տվյալների հավաքագրում և բարելավումներ տեղի չեն ունենում։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում Քոլեջի՝ նոր գյուղատնտեսական կրթական ծրագրեր ներդնելու ձգտումը։ Միևնույն ժամանակ, խումբը նշում է, որ նոր ծրագրերի արդյունավետ իրականացման համար Քոլեջին անհրաժեշտ կլինեն աշխատաշուկայի առավել խորքային վերլուծություններ, որոնք հնարավորություն կընձեռեն ապահովելու շրջանավարտների հետագա մասնագիտական զբաղվածությունը։

Դրական է գնահատվում, որ որոշ մոդուլներ կամ թեմաներ ՄԿԾ-ներում ներառվել են գործատուների հետ համագործակցության արդյունքում, այնուամենայնիվ խումբը նշում է, որ Քոլեջը կարիք ունի որդեգրելու ինստիտուցիոնալ մոտեցում՝ նոր մոդուլներ կամ թեմաներ ներդնելիս համակարգված վերլուծելու, թե շրջանավարտներն ինչ կարողությունների կարիք ունեն, և այդ փոփոխությունները որքանով կնպաստեն նրանց մասնագիտական պատրաստվածության մեծացմանը:

Ինչ վերաբերում է պրակտիկաներին, ապա փորձագիտական խումբը նշում է, որ «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» մասնագիտության ուսումնական և արտադրական պրակտիկաների շրջանակները բավարար լայն չեն՝ ապահովելու ՄԿԾ-ով սահմանված բոլոր վերջնարդյունքների ձեռքբերումը: Ներկայիս պրակտիկայի բովանդակությունը հիմնականում սահմանափակված է ավտոմեքենաների վերանորոգման աշխատանքներով: Խումբը գտնում է, որ անհրաժեշտ է ներգրավել նաև գործատուների լոգիստիկայի ոլորտից, որոնք տրամադրում են փոխադրումների կառավարման և լոգիստիկ ծառայություններ, ինչը հնարավորություն կտա ուսանողներին ձեռք բերել առավել համապարփակ և արդիական հմտություններ՝ նպաստելով նաև շրջանավարտների աշխատանք գտնելու հնարավորությունների մեծացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում մարզի համար գերակա ոլորտներ հանդիսացող պիլոտային ԱՀՈՒ ՄԿԾ-ների առկայությունը: ԱՀՈՒ կրթական ծրագրերի արդյունավետությունը բարձրացնելու և սահմանված վերջնարդյունքների լիարժեք ձեռքբերման համար անհրաժեշտ է ոչ միայն գործընկերների արտադրական միջավայրի ռեսուրսային բազայի քարտեզագրում ՄԿԾ-ների վերջնարդյունքների հետ, այլև անհրաժեշտ է ապահովել ուսանողների փոխատեղման ճկուն քաղաքականություն: Այս քաղաքականությունը պետք է նախատեսի տարանջատված խմբերով այցելություններ՝ ապահովելով ուսանողների հավասար ներգրավվածությունը գործնական դասերին: Այս քաղաքականությունը թույլ կտա ապահովել ուսանողակենտրոն մոտեցում՝ հնարավորություն տալով ուսանողներին լիարժեքորեն ներգրավվել արտադրական գործընթացում և ստանալ անհատականացված հետադարձ կապ գործատուից:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում ՄՈՒՀ-ում դասավանդման համակարգված մոտեցումը, որը ներառում է մոդուլային ձևաչափով ուսուցում, համապատասխան թեմատիկ պլաններ, գնահատման թերթիկներ և այլ տարրեր: Դասավանդման մեթոդների կիրառության տեսանկյունից նկատելի է, որ որոշ դասախոսներ կիրառում են նորարարական մեթոդներ՝ ներառելով համակարգչային

ծրագրեր, խաղեր և խաղարկային տարրեր: Նման մոտեցումների լայն տարածումը կարող է էապես բարձրացնել դասավանդման արդյունավետությունը՝ նպաստելով ուսանողների ավելի ներգրավված և ակտիվ մասնակցությանը ուսումնական գործընթացում:

Դրական միտում է «Անասնաբուժություն» ՄԿԾ-ի պետական ամփոփիչ քննությունների անցկացումը իրական արտադրական միջավայրում: Սա կարևոր քայլ է, որն ապահովում է ուսանողների գործնական պատրաստվածությունն ու տեսական գիտելիքների կիրառումը: Այս ձևաչափը հնարավորություն է տալիս համակողմանի գնահատել նրանց հմտություններն ու պատրաստվածությունը՝ աշխատաշուկայում ինտեգրվելու համար: ՄՈՒՀ-ը այս դրական փորձառությունը կարող է տարածել նաև մյուս ՄԿԾ-ներում:

Իսկ ինչ վերաբերում է բենչմարքինգին, ապա փորձագիտական խումբը նշում է, որ գործընթացի շրջանակներում անհրաժեշտ է համեմատել ոչ միայն ուսումնական պլանները, այլ նաև անհրաժեշտ է խորքային վերլուծություն իրականացնել ուսանողներին տրամադրվող առաջադրանքների, գնահատման չափանիշների, դասավանդման մեթոդների և այլ կարևոր բաղադրիչների վերաբերյալ: Նման մոտեցումը կնպաստի լավագույն փորձի դուրսբերմանը և ծրագրերի շարունակական բարելավմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Քոլեջը ջանքեր է գործադրում ՄԿԾ-ների բարելավման ուղղությամբ, կրթական գործընթացներում մասնակցում են գործատուները, իրականացնում են աշխատանքի վրա հիմնված կրթական ծրագրեր, առկա է դասավանդման և գնահատման կանոնակարգված գործընթաց, ուսումնառության ընթացքում որոշակիորեն կիրառվում են ինտերակտիվ մեթոդներ, փորձագիտական խումբը գտնում է, որ Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջը համապատասխանում է չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր: Քոլեջում ընդունելությունը կազմակերպվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատված կարգի համաձայն՝ dimord.emis.am կայքի միջոցով: Ընդունելության մասին տեղեկատվությունը տարածվում է կայքի և ֆեյսբուքյան օգտատիրոջ միջոցով: Բոլոր բաժիններում ընդունելությունը կատարվում է դպրոցից բերված ավարտական փաստաթղթի գնահատականների հիման վրա: Ընդունելության արդյունքները փակցվում են ինչպես քոլեջում տեսանելի վայրերում, այնպես էլ հրապարակվում են ֆեյսբուքյան էջում:

Դիմորդների հավաքագրման նպատակով իրականացվում են «Բաց դռների օրեր» և գովազդային արշավներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները հիմնականում տեղեկանում են քոլեջի մասին իրենց ծանոթների և հարազատների միջոցով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների հավաքագրման աշխատանքներին մասնակցում են Կարիերայի կենտրոնը, Որակի ներքին ապահովման պատասխանատուն և անհրաժեշտության դեպքում՝ ողջ անձնակազմը: Վերջին տարիներին նկատվում է դիմորդների թվի դինամիկ աճ: Օրինակ, 2021-2022 ուսումնական տարվա համեմատ 2024-2025 ուսումնական տարում ուսանողների թիվն աճել է 40-ով՝ հասնելով 281-ի: «Ֆինանսներ» բաժնում սովորում են առավելագույն թվով ուսանողներ՝ 62: Ընթացիկ տարում «Անասնաբուժություն» մասնագիտությամբ լրացվել են բոլոր 20 լիցենզիոն տեղերը՝ առանց որևէ թափուր տեղի: Դիմորդների թվի աճը 2024-2025 ուսումնական տարում ՄՈՒՀ-ը պայմանավորում է «Անասնաբուժություն» մասնագիտության համար սահմանված 50 հազար դրամ կրթաթոշակով:

Իսկ ինչ վերաբերում է ուսանողների հեռացումներին, ապա անհրաժեշտ է նշել, որ վերջին 4 տարիների վերլուծությունների արդյունքները ցույց են տալիս, որ հեռացումները սակավ են և հիմնական պատճառը բնակության վայրերի փոփոխություններն են:

Քոլեջն ուսանողների կրթական կարիքների գնահատումն իրականացնում է Որակի ներքին ապահովման պատասխանատուի միջոցով: Որպես ուսանողների

կրթական կարիքների վերհանման մեխանիզմ են դիտարկվում հարցումները, դրանց արդյունքների վերլուծությունը քոլեջը համարում է իր գործունեության որակի և արդյունավետության շարունակական գնահատման հիմնական գործիքներից մեկը: Կարիքների վերհանման միջոց է նաև բողոքների և առաջարկությունների արկղիկը, որը բացվում է ամեն կիսամյակի վերջում: Սրա միջոցով բացահայտվել են Քոլեջի նյութատեխնիկական բազային վերաբերող խնդիրներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն իրենց կարիքների վերհանման առաջնային օղակ դիտարկում են կուրսղեկներին:

Քոլեջում իրականացվում են նախաքննական խորհրդատվություններ, որոնց համար սահմանված է հստակ ժամանակացույց: Ըստ քոլեջի կողմից իրականացված հարցումների՝ ուսանողները կարևորում են խորհրդատվական պարապմունքների իրականացումը, և նրանց 45,8%-ն ընդգրկված է այս պարապմունքներում, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հարակից գյուղական համայնքների բնակիչ ուսանողները, պայմանավորված համայնքային տրանսպորտի աշխատանքի գրաֆիկով, չեն կարողանում մասնակցել խորհրդատվություններին: Խնդրի լուծման նպատակով ուսանողների և դասախոսի՝ առցանց հարթակում (Վայբեր) շփման հնարավորություն է ստեղծվել, որտեղ ուսանողները կարող են դիմել դասախոսներին և ստանալ անհրաժեշտ խորհրդատվություն: Ուսանողների համար նախատեսված առանձին այլ լրացուցիչ պարապմունքներ առկա չեն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն ազատ են դիմելու վարչական անձնակազմին իրենց հուզող հարցերով: Քոլեջում վարչական անձնակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց չկա: Քոլեջը հարցումների միջոցով գնահատել է նաև վարչական անձնակազմից ուսանողների բավարավածությունը, ըստ որի ուսանողների 80%-ը տեղեկացված է իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին, 45,8%-ը օգտվում է դրանցից, իսկ 83,3%-ը բավարարված է այդ ծառայություններից:

Ուսանողների և շրջանավարտների կարիերային նպաստելու նպատակով քոլեջում առկա է կարիերայի ստորաբաժանում: Կարիերայի ստորաբաժանումը կազմակերպում է ոչ ֆորմալ դասընթացներ, ճանաչողական այցեր, կլոր սեղան քննարկումներ, տեսանյութերի դիտում, հանդիպում տարբեր կազմակերպության ներկայացուցիչների և ոլորտային մասնագետների հետ: Քոլեջը հաստատությունների հետ թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման շուրջ համաձայնագրեր չունի: Կարիերայի պատասխանատուն ևս կանոնավոր կերպով շրջանավարտներին, ուսանողներին չի իրազեկում թափուր աշխատատեղերի վերաբերյալ:

Վերջին երեք տարիների ընթացքում քոլեջի շրջանավարտների հետագծի վերլուծությունը պարզ ցույց է տալիս, որ մեծ մասն ընտրում է կրթությունը շարունակելու տարբերակը, իսկ աշխատանքի անցնելու ցուցանիշները, հատկապես իրենց մասնագիտությամբ, համեմատաբար ցածր են:

2023-2024թթ. քոլեջի 54 շրջանավարտներից 35%-ը (19-ը հոգի) շարունակել են ուսումը բուհերում, շուրջ 28%-ը (15 հոգի) ինքնազբաղված են, 28%-ը (15 հոգի) զորակոչվել են բանակ, իսկ 5.5%-ը (3 հոգի) աշխատում են ոչ իրենց մասնագիտությամբ: Անհրաժեշտ է նշել, որ այս տարում ոչ ոք իր մասնագիտությամբ աշխատանք չի գտել: **2022-2023թթ.** քոլեջի 53 շրջանավարտներից 41.5%-ը (22 հոգի) ինքնազբաղ են եղել, 34%-ը (18 հոգի) զորակոչվել են բանակ, 19%-ը (10 հոգի) շարունակել են ուսումը բուհերում, իսկ մնացած 4.8%-ը աշխատանքի են անցել տարբեր ոլորտներում, միայն 4%-ը (2 հոգի) աշխատանք են գտել իրենց մասնագիտությամբ: Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ ինքնազբաղ շրջանավարտների զբաղվածության ոլորտը հստակեցված չէ:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ առկա են նաև կրթական ծրագրեր, օրինակ՝ «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում», որոնցով շրջանավարտների մասնագիտական աշխատանք գտնելու ցուցանիշը 0 է:

Նախորդ ինստիտուցիոնալ հավատարմագրման արդյունքում փորձագիտական խումբը քոլեջին տրամադրել էր խորհրդատվություն գնահատելու ուսանողներին տրամադրվող կարերայի ծառայությունները՝ վերլուծելով աշխատանքների արդյունավետությունը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս ուղղությամբ տվյալներ չեն հավաքագրվում և վերլուծություններ տեղի չեն ունենում:

Իսկ ինչ վերաբերում է ուսանողներին տրամադրվող հետազոտական աշխատանքների ներկայացմանը, ապա անհրաժեշտ է նշել, որ դրանք սակավ են և հիմնականում չեն պարունակում ուսանողի կողմից իրականացված ինքնուրույն աշխատանք:

Քոլեջն ունի ՈՒԽ, որում ընդգրկված են անդամներ բոլոր մասնագիտությունների և կուրսերի ուսանողներից: Ուսանողական խորհուրդն իր կողմից նախատեսվող միջոցառումներն ամրագրում է տարեկան աշխատանքային պլաններում՝ նշելով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետները: ՈՒԽ-ն քննարկում և պլանավորում է միջոցառումների կազմակերպման գործընթացները, ՈՒԽ նիստեր հրավիրվում են ամեն ամիս, դրանք արձանագրվում են ՈՒԽ քարտուղարի կողմից: ՈՒԽ-ի կողմից հիմնականում կազմակերպվում են

տարաբնույթ մշակութային միջոցարումներ։ Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ նիստերի ընթացքում ուսանողների իրավունքների խախտման կամ պաշտպանությանն ուղղված հարցեր չեն քննարկվել։ Ավելին, ՈՒԽ նիստերին ըստ անհրաժեշտության մասնակցում է նաև քոլեջի փոխտնօրենը։ Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ Ուսանողական խորհրդի աշխատանքների իրազեկման մասին միջոցառումները խիստ սակավ են։

Քոլեջում գործող կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների գնահատման և դրանց որակի ապահովման մեխանիզմների արդյունավետությունը գնահատվում է հարցումների միջոցով, որոնք չունեն հստակ պարբերականություն, արդյունքների վերլուծություն չկա, որը կարտացոլվի հետագա պլանավորումների մեջ։ Վերլուծությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսանողների կողմից վերհանված խնդիրները հիմնականում վերաբերում են նյութատեխնիկական բազայի համալրմանը։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջում ուսանողների հավաքագրման գործընթացի կանոնակարգվածությունը, ինչպես նաև ուսանողների ընտրության և ընդունելության հստակ մեխանիզմների առկայությունը, որոնք վերջին տարիներին ապահովել են ուսանողների թվաքանակի աճ։ Միևնույն ժամանակ, խումբը կարևորում է, որ դիմորդների հավաքագրման գործընթացում առավել ընդգծվի այն շրջանավարտների հաջողված փորձառությունը, որոնք իրենց մասնագիտությամբ հասել են հաջողությունների աշխատաշուկայում։ Նման մոտեցումը կարող է նպաստել դիմորդների մոտիվացիայի բարձրացմանը՝ ապահովելով տեսանելի օրինակներ կարիերայի և մասնագիտական զարգացման հեռանկարների վերաբերյալ, ինչպես նաև խթանել նրանց վստահությունը սեփական մասնագիտական ընտրության հանդեպ՝ նպաստելով ավելի գիտակցված որոշումների կայացմանը։ Հաջողություն գրանցած շրջանավարտների փորձի ներկայացումը նաև կնպաստի, որպեսզի Քոլեջը շեշտադրի իր կրթական ծրագրերի որակն ու գործնական նշանակությունը, ինչը կհանգեցնի ոչ միայն դիմորդների թվի ավելացմանը, այլև կխթանի հաստատության հեղինակության ամրապնդմանը։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում Քոլեջում ներդրված նախաքննական խորհրդատվությունների համակարգը, որը կարող է նպաստել ուսանողների պատրաստվածության բարձրացմանը քննական գործընթացին։

Միևնույն ժամանակ, խումբը նշում է, որ անհրաժեշտ կլինի առավել մանրամասնորեն գնահատել, թե որքան հաճախ և ինչ չափով են իրականացվում այս խորհրդատվությունները, ինչպես նաև դրանց արդյունավետությունը:

Քոլեջը հնարավորություն է ընձեռում ուսանողներին ազատորեն դիմելու վարչական կազմին իրենց կարիքներով: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը գտնում է, որ վարչական անձնակազմը նաև կարող է կազմակերպել տարեկան հանդիպումներ ուսանողների հետ, որտեղ կքննարկվեն ուսանողների կարիքներին ու խնդիրներին վերաբերվող ընդհանուր հարցեր, ինչպիսիք են, օրինակ, ժամանակակից մասնագետին անհրաժեշտ նոր հմտությունների ձևավորումը, աշխատաշուկայի ներկայիս մարտահրավերները, ուսանողների մասնակցությունը կառավարման գործընթացներին և այլ թեմաներ: Նման հանդիպումները կարող են նպաստել ոչ միայն ուսանողների կարիքների վերհանմանը, այլև նոր գաղափարների և նախաձեռնությունների ձևավորմանը:

Դրական է, որ Քոլեջում գործում է Կարիերայի կենտրոն, որը կազմակերպում է ոչ ֆորմալ դասընթացներ, հանդիպումներ գործատուների հետ և այլ միջոցառումներ, որը կարող է նպաստել ուսանողների փափուկ հմտությունների զարգացմանը և մոտիվացիայի մեծացմանը: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ այս միջոցառումները պետք է դառնան պարբերական, միջոցառումներում շարունակաբար ընդգրկվեն նոր գործատուներ, ինչպես նաև շրջանավարտներ:

Իսկ ինչ վերաբերում է շրջանավարտների զբաղվածությանը, ապա վերլուծությունների արդյունքները ցույց են տալիս, որ շրջանավարտների մեծ մասը ընտրում է կրթությունը շարունակելու տարբերակը կամ ինքնազբաղությունը, մինչդեռ աշխատանքի ներգրավվածության մակարդակը, հատկապես իրենց մասնագիտությամբ, մնում է ցածր: Փորձագիտական խումբն ընդգծում է, որ անհրաժեշտ է մանրամասն ուսումնասիրել և վերլուծել ինքնազբաղված շրջանավարտների գործունեությունը՝ պարզելու, թե քանիսն են ինքնազբաղ հենց իրենց մասնագիտությամբ: Մինչդեռ, նույնքան կարևոր է ուսումնասիրել այն հիմնական գործոնները, որոնք խոչընդոտում են աշխատանք գտնելուն: Վերլուծված տվյալների հիման վրա հնարավոր կլինի ավելի խորապես հասկանալ զբաղվածության խնդիրների պատճառները և համապատասխան բարեփոխումներ իրականացնել:

Շրջանավարտների զբաղվածությունը խթանելու նպատակով Քոլեջն անհրաժեշտություն կունենա ստեղծելու մեխանիզմներ թափուր աշխատատեղերի վերաբերյալ տվյալներ հավաքագրելու և դրանք շրջանավարտներին հաղորդելու

ուղղությամբ։ Այս նպատակով անհրաժեշտ է ձևավորել միասնական պլատֆորմ կամ համակարգ շրջանավարտների համար, որը թույլ կտա ոչ միայն արագորեն տարածել թափուր աշխատատեղերի մասին տեղեկատվությունը, այլև ապահովել դրա հնարավորինս ժամանակին և համակարգված հասանելիությունը շրջանավարտներին։ Այդ համակարգը կարող է գործել որպես կրթական հաստատության և գործատուների միջև երկկողմանի համագործակցության հարթակ, որի միջոցով հնարավոր կլինի տրամադրել ամբողջական և թարմ տեղեկատվություն աշխատաշուկայի մասին։

Դրական է, որ ուսանողների իրավունքների պաշտպանության համար գործում է Խորհուրդ, որը կազմակերպում է որոշ միջոցառումներ, սակայն փորձագիտական խումբը նշում է, որ կառույցը անհրաժեշտություն ունի առավել մեծ անկախության՝ սահմանափակված չլինելով փոխտնօրենի վերահսկողությամբ։ Կարևոր է նաև, որ Խորհուրդը ստանձնի ուսանողների կարիքների վերհանման և դրանց լուծման ուղղությամբ առաջարկություններ ներկայացնողի դերը՝ դառնալով արդյունավետ հարթակ, որտեղ ուսանողությունը կարող է ներկայացնել իր խնդիրները։ Այսպիսով, Խորհուրդը պետք է հանդիսանա իրական կամուրջ ուսանողության և ղեկավարության միջև, որը կնպաստի երկուստեք արդյունավետ հաղորդակցության ձևավորմանը։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԳՊԳՔ-ում գործում են ուսանողների հավաքագրման մեխանիզմներ, առկա է ուսանողների թվաքանակի աճ, գործում են ուսանողների կարիքների վերհանման որոշ մեխանիզմներ, ուսանողները ազատ են դիմելու վարչական անձնակազմին, ուսանողներին տրամադրվում են որոշ նախաքննական խորհրդատվություններ, գործում է ուսանողների իրավունքները ներկայացնող կառույց, փորձագիտական խումբը գտնում է, որ Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջը համապատասխանում է չափանիշ 4-ի պահանջներին։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր: Ըստ ՄՈՒՀ-ի 2021-2026 թթ.-ի ՌԾ-ի՝ քոլեջն իր առջև նպատակադրել է համալրել դասախոսական կազմը: Քոլեջի դասախոսական համակազմի ընտրությունն իրականացվում է՝ ըստ «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման» կարգի: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թափուր հաստիքների համալրման համար հայտարարվում և իրականացվում են մրցույթներ, մրցույթին մասնակցում է հիմնականում 1 թեկնածու: Մրցույթի ընթացքում տեղի է ունենում հարցազրույց թեկնածուի հետ, մասնագիտական գիտելիքն ստուգվում է մի քանի հարցից բաղկացած հարցատոմսով, որից հետո մրցութային հանձնաժողովի քվեարկությամբ թեկնածուն համալրում է քոլեջի դասախոսական կազմը: 2022-2023 ուստարվանից մինչև 2024-2025 ուստարին ընդունվել է 6 նոր դասախոս: Ներկայումս քոլեջի 3 դասախոս գործատուներ են: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի շրջանավարտ-դասախոսները ներկայումս 4-ն են:

Ըստ ՄՈՒՀ-ի տրամադրած 2023-2024 ուստարվա տվյալների՝ դասավանդող կազմում ներգրավված է 31 դասախոս, որոնցից 28-ը ունեն բարձրագույն կրթություն, 3-ը՝ միջին մասնագիտական: Դասախոսական կազմի ընտրության ու համալրման գործընթացի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դասախոսների հիմնական մասի մասնագիտական որակավորումները համապատասխանում են դասավանդվող առարկաներին և մոդուլներին՝ բացառությամբ 24 տարվա մանկավարժական փորձով ապրանքագետ-ինժեների որակավորում ունեցող դասախոսի, որը դասավանդում է «Համակարգիչների շահագործում» մասնագիտության մի շարք հատուկ մասնագիտական մոդուլներ, և 43 տարվա մանկավարժական փորձ ունեցող նախադպրոցական մանկավարժության մասնագետի, որը դասավանդում է աշխարհագրություն, հասարակագիտություն, հաղորդակցություն և ԱԳԸՀ («Աշխատանքային գործունեության ընդհանուր հմտություններ») մոդուլները/ առարկաները: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ դասախոսական կազմի կողմից դասավանդվող առարկաների/մոդուլների առավելագույն քանակը մեկ դասախոսի

հաշվարկով 17-ն է (օրինակ՝ «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» մասնագիտության մոդուլների դասախոսը, որը նաև կաթի և կաթնամթերքի լաբորատորիայի պատասխանատուն է), նվազագույնը՝ 1։

ՄՈՒՀ-ը չունի դասավանդողների գնահատման հատուկ ընթացակարգ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսական կազմի կանոնակարգված գնահատում քոլեջում դեռևս չի իրականացվել։

ՄՈՒՀ-ը դասախոսական կազմի գնահատման մեխանիզմ է դիտարկում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների հարցումները և դասալսումների անցկացումը։ Քոլեջն ունի «Դասալսումների կազմակերպման, քննարկման և գնահատման կարգ», դասալսումների և փոխադարձ դասալսումների ժամանակացույց և դասալսումների անցկացման ձևաթուղթ։ Դասալսումները հաճախ անցկացվում են անբիոնների վարիչների կամ ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի կողմից։ Գնահատվում են դասախոսների մասնագիտական, մանկավարժական և հաղորդակցման կարողությունները, արվում են առաջարկություններ դասի կազմակերպման, արդյունավետ մեթոդների ընտրության վերաբերյալ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասալսումները հստակ պլանավորված և կանոնակարգված են։ Դասալսումներին արված դիտարկումները վերաբերում են ինտերակտիվ մեթոդների ոչ բավարար կիրառմանը, ինչի արդյունքում ուսանողների ներգրավվածության պակաս կա։ Առաջարկվում է, դասի նպատակից ելնելով, ներառել անհատական աշխատանք, իրավիճակային խնդիրների լուծում։ Դասալսումների արդյունքները քննարկվում են դասախոսների հետ։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ սկսնակ դասավանդողները ևս ներկա են գտնվում փորձառու մասնագետների դասերին, այս եղանակը հանդիսանում է ներքին լավ փորձի փոխանցման միջոց։

Իսկ ինչ վերաբերում է դասախոսական կազմի մասնագիտական կատարելագործմանը, ապա անհրաժեշտ է նշել, որ այն հանդիսանում է ՌԾ-ի առաջնահերթություններից մեկը։ Քոլեջի նախահաշվի և բյուջեի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջը ֆինանսական միջոցներ է նախատեսում դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումների համար։ Օրինակ՝ աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների համար 2023թ. նախահաշվում սահմանված է որոշակի գումար։ Սական 2023թ. բյուջեով ծախսերի հատվածում համապատասխան տողի լրացումը 0% է, ծախսը տեղի չի ունեցել։

Դասախոսների վերապատրաստման ներկայացված ցանկում զգալի մաս են կազմում ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացված պարբերական վերապատրաստումները։ 2020թ.-ից մինչ օրս ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից վերապատրաստում է անցել 29 դասախոս, վերապատրաստումները հիմնականում վերաբերել են փափուկ հմտությունների զարգացմանը, կարողություններին միտված ուսումնառության գործընթացի կազմակերպմանը, կիբերանվտանգությանը և այլն։ Վերապատրաստումներից մի քանիսը եղել են նաև մասնագիտական դասընթացներ, որոնք հիմնականում վերաբերել են «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» ՄԿԾ-ում դասավանդող դասախոսներին։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» մասնագիտության դասավանդողների մասնագիտական վերապատրաստում չի իրականացվել։

Նաև անհրաժեշտ է նշել, որ Քոլեջը կազմակերպում է դասախոսական կազմի անգլերենի իմացության զարգացմանն ուղղված ներքին վերապատրաստումներ, վերջինս միտված է Էրազմուս+ ծրագրերին մասնակցելուն։ Այս վերապատրաստման արդյունավետությունը քոլեջը չի գնահատել և պարզ չէ՝ արդյոք դասախոսական անձնակազմն ունի օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացում, թե ոչ։

Քոլեջի ՌԾ առաջնահերթություններից է նաև դասավանդողների մանկավարժական աշխատանքի գնահատման և պարգևատրման համակարգի ձևավորումը։ ՄՈՒՀ-ն ունի նաև 2019 թվականից հաստատված պարգևատրման ընթացակարգ և 2017 թվականին հաստատված «Դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն և ընթացակարգ»։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասավանդման լավ փորձ ունեցող դասախոսներին ՄՈՒՀ-ը խրախուսում է պատվոգրերով, բանավոր շնորհակալական խոսքերով։ Իսկ Ամանորի և ծննդյան տոների կապակցությամբ ամբողջ անձնակազմը ստանում է հավասար ֆինանսական պարգևատրումներ։

Անդրադառնալով դասախոսական կազմի կայունությանը՝ հարկ է նշել, որ դասախոսական կազմի երիտասարդացման միտում է նկատվում. նոր ընդունված դասավանդողները երիտասարդ են։ Քոլեջը որպես դասախոս-թեկնածուների բազա դիտարկում է նաև իր շրջանավարտներին։ Ներկայումս քոլեջում դասավանդողների միջին տարիքը 49-ն է։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ երիտասարդ կադրերին տրամադրվում է մենթորական աջակցություն նամանավանդ ամբիոնների և ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի կողմից։

Դասախոսական կազմի կայունության նպատակով Քոլեջի հաստիքային վարչական աշխատակիցները իրենց վարչական գործառույթների իրականացմանը զուգահեռ նաև ներգրավված են դասավանդման գործընթացում: Կարիերայի ուղղորդման պատասխանատուն դասավանդում է «Անվտանգություն և առաջին օգնություն» մոդուլը, Որակի ներքին ապահովման պատասխանատուն՝ «Լանդշաֆտագիտություն և էկոլոգիայի հիմունքներ» առարկան, տնօրենի ուսումնական աշխատանքիների գծով տեղակալը՝ «ՀՀ Հարկային օրենսդրություն»:

Քոլեջը հիմնականում ունի բավարար վարչական և ուսումնաօժանդակ կազմ ռազմավարական խնդիրների լուծման համար:

Դատողություններ: Դրական է, որ Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան գյուղատնտեսական քոլեջը դասախոսական կազմի թափուր տեղերի համալրումն ապահովում է մրցութային կարգով: Ընտրության նպատակով ստուգվում են դիմորդի ինչպես մանկավարժական, այնպես էլ մասնագիտական գիտելիքները, ինչը կարող է նպաստել համապատասխան որակավորում ունեցող թեկնածուների ընտրությանը: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը պետք է քայլեր ձեռնարկի գործատու դասախոսների ներգրավվման ուղղությամբ՝ նպաստելու գործնական կարողությունների զարգացմանը, ինչպես նաև տեղում դասախոսների համար վարպետության դասերի կազմակերպման հնարավորությունների ստեղծմանը: Դրական է, որ 2022-2023 ուսումնական տարվանից քոլեջն ընդունել է 6 նոր դասախոս, ինչը նպաստել է դասախոսական անձնակազմի երիտասարդացմանը: Փորձագիտական խումբը խրախուսում է, որ քոլեջն առավել ակտիվ քայլեր ձեռնարկի ավելի մեծ թվով գործատու-դասախոսներ ներգրավելու ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա ուսանողներին ստանալ աշխատավայրից եկող առաջադրանքներ՝ նպաստելով նրանց գործնական կարողությունների զարգացմանը, ինչպես նաև հնավարություն կստեղծվի հիմնական դասախոսների մասնագիտական կարողությունների զարգացման համար:

Քոլեջում կիրառվում են որոշակի մեխանիզմներ դասավանդման գործընթացի գնահատման և բարելավման ուղղությամբ: Այնուամենայնիվ, փորձագիտական խումբը մատնանշում է դասախոսների գնահատման համակարգված գործընթացի անհրաժեշտությունը, որը թույլ կտա առավել օբյեկտիվորեն բացահայտել դասավանդման արդյունավետությունը, հիմնական խնդիրներն ու դասախոսական կազմի կարիքները: Այս տվյալների խորքային վերլուծությունը հիմք կհանդիսանա նաև դասախոսների վերապատրաստման

պլանավորման և խրախուսման ռազմավարությունների մշակման համար՝ նպաստելով կրթության որակի շարունակական բարելավմանը:

Դրական է, որ դասախոսների վերապատրաստումը դիտարկվում է որպես քոլեջի ռազմավարական խնդիր: Կարևոր է, որ դասախոսները ներգրավված են մեթոդական վերապատրաստումներում, ինչը կարող է նպաստել դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառմանը լսարանում: Սակայն փորձագիտական խումբը շեշտադրում է նաև մասնագիտական վերապատրաստումների անհրաժեշտությունը, որոնք կնպաստեն դասախոսների շարունակական մասնագիտական զարգացմանը և ոլորտում առկա նորամուծություններին ծանոթացմանը: Այս ուղղությամբ քոլեջը կարիք կունենա հայթայթելու լրացուցիչ ֆինանսական միջոցներ և նախատեսելու նաև ֆինանսական միջոցներ՝ մասնագիտական վերապատրաստումների ապահովման նպատակով: Միևնույն ժամանակ մտահոգիչ է որոշ դասախոսների գերծանրաբեռնվածությունը՝ մինչև 17 առարկայի դասավանդմամբ, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ դասավանդման որակի վրա:

Դրական է, որ քոլեջում իրականացվում են մենթորական աշխատանքներ երիտասարդ դասախոսների հետ, ինչը նպաստում է նրանց մասնագիտական աճին և ներքին փորձի փոխանակմանը: Անուամենայնիվ, փորձագիտական խումբը նշում է, որ այս գործընթացի ոչ կանոնակարգված լինելը կարող է հանգեցնել ոչ հետևողական և տարբերակված մոտեցման՝ կախված առանձին աշխատակիցների նախաձեռնությունից: Այսպիսի ոչ կանոնակարգված գործընթացը կարող է սահմանափակել մենթորության արդյունավետությունը և ստեղծել անհավասար պայմաններ երիտասարդ դասախոսների զարգացման համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան գյուղատնտեսական քոլեջում դասախոսական կազմի ընտրության գործընթացում ուշադրություն է դարձվում թեկնածուների մասնագիտական և մանկավարժական կարողություններին, առկա է երիտասարդ կադրերի ներգրավման դրական միտում, ինչպես նաև ուսումնական գործընթացում ընդգրկված են որոշ գործատու դասախոսներ, որոնք իրենց փորձի և կիրառական գիտելիքների շնորհիվ նպաստում են ուսանողների գործնական կարողությունների զարգացմանը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջը համապատասխանում է չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր: Քոլեջում հետազոտական աշխատանքների իրականացումը չի դիտարկվում որպես ռազմավարական առաջնահերթություն: Քոլեջը՝ որպես հետազոտական աշխատանքներ դիտարկում է ուսանողների պրակտիկաները, անհատական աշխատանքները, ռեֆերատները, ավարտական աշխատանքները:

Քոլեջն ունի ռեֆերատների պատրաստման և ներկայացման կանոնակարգ (Խորհրդի կողմից հաստատված 2021թ.), որն ընդգրկում է ռեֆերատին ներկայացվող տեխնիկական պահանջները, այդ թվում՝ կառուցվածք, տառաչափ և այլն: Սակայն, Քոլեջի կողմից փորձագետներին ներկայացված տարբեր ՄԿԾ-ների և մոդուլային ծրագրերի շրջանակներում իրականացված ռեֆերատային և ինքնուրույն աշխատանքները հիմնականում չեն պարունակում հետազոտական և ուսանողի կողմից ինքնուրույն իրականացված բաղադրիչ:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ աշխատանքները հաճախ միայն պարունակում են մեջբերումներ մասնագիտական գրականությունից կամ համացանցի բաց աղբյուրներից, իսկ ուսանողների ինքնուրույն վերլուծություններն ու եզրակացությունները բացակայում են: Որպես բացառություն՝ առկա են միայն մի քանի աշխատանքներ, որոնցում ուսանողները փորձել են իրականացնել որոշ ուսումնասիրություններ, սակայն դրանք հիմնականում հետազոտական բնույթ չեն կրում: Օրինակ՝ հետազոտական կարողությունների զարգացման նպատակով «Ընդհանուր վիճակագրության հիմունքներ» մոդուլի շրջանակում հանձնարարվել է բացահայտել ուսանողների ուսման առաջադիմության մակարդակի վրա ազդող գործոնները, ծնելիության աճի մակարդակի վրա ազդող գործոնները, ՀՀ-ում գործազրկության պատճառները: Ուսման առաջադիմության մակարդակի վրա ազդող գործոնները բացահայտելու նպատակով ուսանողներն իրականացրել են հարցումներ իրենց կուրսընկերների

շրջանում, սակայն աշխատանքում չի երևում հստակ մեթոդաբանություն՝ հարցվողների քանակ, սեռային բաշխվածություն, կուրսերի տարանջատում և այլն: «Անասնաբուժություն» մասնագիտության ուսանողներից մեկը նույնպես կատարել է հետազոտական բնույթի աշխատանք, սակայն նամանատիպ դեպքերը սակավաթիվ են:

«Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» կրթական ծրագրի շրջանակում պանիրների պատրաստման գործընթացում առկա են հետազոտական բաղադրիչի տարրեր, երբ ուսանողները փորձում են ստանալ պանիրների տարբեր համային համադրություններ: Սակայն քոլեջը սա դիտարկում է որպես մասնագիտական հմտությունների զարգացում, այլ ոչ թե որպես հետազոտություն:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողներին տրվող վերլուծական կարողություններ զարգացնող առաջադրանքները ընդհանուր առմամբ սակավ են:

Չնայած այն հանգամանքին, որ քոլեջը դիտարկում է ավարտական աշխատանքները որպես հետազոտական աշխատանք, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որևէ մասնագիտությամբ դիպլոմային աշխատանք չի իրականացվում, բոլոր մասնագիտություններով ուսանողները հանձնում են ավարտական քննություն:

Իսկ ինչ վերաբերում է դասախոսական անձնակազմի կողմից հետազոտական աշխատանքների իրականացմանը և միջազգային փորձի ուսումնասիրմանը, ապա անհրաժեշտ է նշել, որ առկա չեն դասախոսների կողմից տպագրված հետազոտական հոդվածներ, ձեռնարկներ կամ մեթոդական ուղեցույցներ: Դասախոսական կազմի հետազոտական գործունեության խթանման քաղաքականություններ ՄՈՒՀ-ում ևս առկա չեն:

Ինքնավերլուծության մեջ նշվում է, որ քոլեջը նախատեսում է ներդնել ակադեմիական ազնվության հայեցակարգ, որը միտված է լինելու ապահովել հետազոտական աշխատանքների ազնվությունն ու արդարությունը:

Դատողություններ: Փորձագիտական խմբի դիտարկմամբ քոլեջը դեռևս չի հստակեցրել հետազոտության նպատակները իր համար և այն, թե հետազոտությունը ինչպես կարող է արտահայտվել իր գործունեության համատեքստում: Քոլեջում հետազոտությունների ոլորտում հստակ սահմանված ուղղությունների, հավակնությունների և հետաքրքրությունների սահմանումը կնպաստի այս ոլորտի առավել ուղղորդված և նպատակային զարգացմանը: Քոլեջը, որպես տարածաշրջանի միակ գյուղատնտեսական ուղղվածության ուսումնական

հաստատություն, ունի բացառիկ հնարավորություն օգտագործելու իր մրցակցային առավելությունները՝ ուսումնասիրելով ոլորտի հրատապ խնդիրները և՝ համադրելով իր հետազոտական ուղղությունները դրանց հետ, մշակելով համապատասխան լուծումներ։ Այսպիսի մոտեցումը հնարավորություն կընձեռի քոլեջին ընդլայնելու իր ազդեցությունն ու հետաքրքրությունը գործատուների և այլ սոցիալական գործընկերների շրջանում։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ուսանողների ինքնուրույն աշխատանքներն ու հաշվետվությունները կրում են զուտ ռեֆերատիվ բնույթ՝ առանց հետազոտական բաղադրիչի։ Փորձագիտական խումբը գտնում է, որ իրական հետազոտական և վերլուծական աշխատանքների ծավալի մեծացումը կնպաստի ուսանողների մասնագիտական հմտությունների կատարելագործմանը, ստեղծագործական մտածելակերպի ու լուծումների որոնման կարողությունների զարգացմանը՝ նպաստելով նրանց՝ աշխատաշուկա առավել պատրաստ մուտք գործելուն։

Նույն համատեքստում կարևոր է նաև դասախոսի հետազոտական գործունեությամբ զբաղվելու հանգամանքը, որը քոլեջը նույնպես պետք է դիտարկի առաջիկայում և քայլեր ձեռնարկի խրախուսման համար։

Հետազոտական գործունեության զարգացման տեսանկյունից էական խոչընդոտ է հանդիսանում մասնագիտական գրականության և ժամանակակից էլեկտրոնային գրադարանների հասանելիության բացակայությունը։ Այս հանգամանքը զգալիորեն նվազեցնում է հետազոտությունների իրականացման հնարավորությունները և սահմանափակում է ուսումնառողների մուտքը դեպի արդի ռեսուրսներ։

Ընդհանուր առմամբ, հետազոտական եզակի աշխատանքները քոլեջում կրում են իրավիճակային բնույթ և չեն բխում հաստատության ռազմավարական նպատակներից ու առաքելությունից։ Անհրաժեշտ է համակարգային մոտեցում՝ հետազոտական բաղադրիչի արմատավորման և զարգացման ուղղությամբ։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան գյուղատնտեսական քոլեջը չի հստակեցրել հետազոտության ոլորտում իր նպատակադրումները, դասախոսական անձնակազմը ներգրավված չէ հետազոտական աշխատանքներում և չի ուսումնասիրում իր մասնագիտության շրջանակներում միջազգային փորձը, սակավ են ուսանողներին տրվող վերլուծական, հետազոտական կարողություն ձևավորող հանձնարարականները,

փորձագիտական խումբը գտնում է, որ Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջը չի բավարարում չափանիշ 6-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր: Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան գյուղատնտեսական քոլեջը զբաղեցնում է 5 հա տարածք և իր գործընթացները կազմակերպում է 3092.6 քմ մակերեսով չորսհարկանի ուսումնական մասնաշենքում: Քոլեջն ունի նաև «Ակումբ» մասնաշենք (802.6 քմ) և օժանդակ շինություններ:

Ուսումնական միջավայրը ներառում է 35 լսարան, որոնցից երեքը համակարգչային են՝ հագեցած մոտ 20 համակարգչով, այդ թվում՝ դյուրակիր, մեկ շարժական պրոյեկտորով և համացանցային կապով: Լսարաններից վեցը նախատեսված են լաբորատոր աշխատանքների համար: Համակարգիչների տեխնիկական և ծրագրային ապահովումը և սպասարկումը վստահված է համակարգչային առարկաների ամբիոնի վարիչին: Փորձագիտական խումբը նկատում է, որ թեև համակարգիչները նոր չեն, դրանք բավարարում են ուսումնական գործընթացի պահանջներին:

Քոլեջն ունի 6 լաբորատորիա/մասնագիտական լսարան: Կաթի վերամշակման ժամանակակից լաբորատորիան բացվել է 2021թ. դեկտեմբերին, այն հագեցած է ժամանանակից սարքավորումներով: Մյուս՝ անասնաբուժական, անատոմիայի և ֆիզիոլոգիայի, երթևեկության կառավարման, ֆիզիկայի, քիմիայի լաբորատորիաները հագեցած են որոշ սարքավորումներով, դիդակտիկ նյութերով, սակայն նորացման և վերազինման կարիք ունեն: Վերջերս քիմիայի լաբորատորիայի համար ձեռք են բերվել անհրաժեշտ նյութեր՝ լաբորատոր

փորձարկումների համար, իսկ «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» ծրագրի լաբորատորիայում թարմացվել են դիդակտիկ նյութերը:

Քոլեջն ունի մեկ պրոյեկտորով և համապատասխան գույքով հագեցած աշխատանքային սենյակ/լսարան, որտեղ իրականացվում են հանդիպումներ, քննարկումներ, ինչպես նաև այն դասերը, որոնց ընթացքում անհրաժեշտություն է լինում կիրառել պրոյեկտորը: Փորձագիտական այցից և ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ լսարանային ֆոնդը, թեև շենքի ընդհանուր վիճակը բավարար է, ունի վերանորոգման և բարելավման կարիք: Գույքը, մասնավորապես ուսանողական նստարանները, բավականին հին են: Վերջին երկու տարում սեփական միջոցներով Քոլեջին հաջողվել է նոր գույքով կահավորել երկու լսարան:

Քոլեջի գրադարանն ունի ընդարձակ գրապահոց և ընթերցասրահ: Առկա է մոտ 14 հազար միավոր գրականություն, հիմնականում հայերեն և ռուսերեն լեզուներով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գրադարանում բացակայում է գրականության քարտարանը (գրացուցակը), սակայն փորձ է արվում ձևավորել թվային գրացուցակ: Թեև գրադարանից կարող են օգտվել թե՛ ուսանողները, թե՛ դասախոսները, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ օգտվողների թիվը մեծ չէ: Պատճառը նաև այն է, որ ուսանողներին չեն հանձնարարվում այնպիսի առաջադրանքներ, որոնք խրախուսում են մասնագիտական գրականության ակտիվ օգտագործումը գրադարանում: Ուսանողները բավարարվում են դասախոսություններով, հանձնարարված մոդուլային նյութերով: Վերջին տարիներին գրադարանը համալրվել է միայն նվիրատվությունների հաշվին, ՄԿՈՒԶԱԿ-ի կամ այլ կազմակերպությունների կողմից հրատարակված գրականությամբ: Գրադարանում գտնվող միակ համակարգիչը, որով աշխատում է գրադարանավարը, միացված չէ համացանցին:

Քոլեջի «Ակումբ» մասնաշենքը ներառում է 250-300 տեղանոց բարեկարգ մեծ սրահ, որը նախատեսված է միջոցառումների անցկացման համար, ինչպես նաև փորձասենյակներ, կահավորված փոքր աշխատասենյակներ, լսարաններ: «Ակումբ» մասնաշենքը հիմնականում օգտագործվում է միջոցառումների համար, իսկ աշխատասենյակներն ու լսարանները մեծ մասամբ չեն օգտագործվում:

Հաստատությունն ունի բեռնատար մեքենա և տրակտոր՝ «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» կրթական ծրագրի մասնագիտական մոդուլների համար:

Քոլեջի հիմնական շենքի հարևանությամբ ԵՄ ֆինանսավորմամբ կառուցվում է նոր մասնաշենք, ինչպես նաև խելացի անասնագոմ «Անասնաբուժություն» մասնագիտության համար. աշխատանքների ավարտը

անխատեսված է 2026 թվականին: Շինարարական աշխատանքներով պայմանավորված՝ տվյալ պահին Քոլեջը չունի սպորտային դահլիճ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ պրակտիկաների իրականացման համար Քոլեջն օգտագործում է գործընկեր կազմակերպությունների ռեսուրսները, հատկապես՝ ԱՀՈՒ-ով իրականացվող մասնագիտությունների պարագայում:

Քոլեջի 2021-2026 թթ. ռազմավարական ծրագրի 8-րդ հիմնախնդիրը շեշտադրում է ուսումնական հաստատության ֆինանսական ռեսուրսների կառավարման արդյունավետության ապահովումը: 2021թ., 2022թ. և 2023թ. ֆինանսական հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ համաձայն, ընդհանուր ծախսերի համապատասխանաբար 85.26%, 83.26% և 83.77% տրամադրվել է աշխատավարձերին, 6.40%, 7.20% և 8.60%՝ ուսանողների կրթաթոշակների ֆոնդին, իսկ տնտեսական ծախսերը կազմել են 6.17%, 8.20% և 5.65%:

Արտաբյուջետային մուտքերը, որոնք հիմնականում ձևավորվում են ուսանողների վարձավճարներից և դիմորդների վճարներից, վերջին երեք տարիներին կազմել են 1.00%-2.10%: Փորձագիտական խումբը փաստում է, որ Քոլեջի բյուջեն չի պլանավորվում ելնելով ռազմավարական ծրագրի հիմնախնդիրներից: Ավելին, իր լաբորատորիաների համար ՄՈՒՀ-ը հումքի ձեռքբերման պլանավորում չի իրականացնում: Կաթի և կաթնամթերքի լաբորատորիայի առկայությունը ՄՈՒՀ-ում թույլ է տալիս իրականացնել կաթի մթերում, ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ շիճուկներ, սակայն հումքի ձեռքբերման պլանավորում չի իրականացվում, մեկ ուսանողի մասով պրակտիկայի համար նյութածախսի հաշվարկ առկա չէ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ Քոլեջը չի մասնակցել դրամաշնորհային ծրագրերին և չի կիրառում ֆինանսավորման այլ մոդելներ: Կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ նվազագույն ռեսուրսների և ըստ մասնագիտությունների պահանջվող ծախսերի հաշվարկ նույնպես չի իրականացվել:

Փաստաթղթաշրջանառությունը լիազոր մարմնի հետ իրականացվում է Mulberry համակարգով, իսկ ներքին շրջանառությունը՝ հիմնականում թղթային եղանակով: Տնօրենի հրամանները, կարգերը և կանոնակարգերը տեղադրվում են հատուկ ցուցատախտակին: Տեղեկատվության ներքին փոխանցման համար օգտագործվում են նաև սոցիալական հարթակներում ստեղծված խմբերը:

Քոլեջն ունի կենտրոնական ջեռուցման համակարգ: Անվտանգության ապահովման նպատակով առկա են հակահրդեհային սարքավորումներ,

կրակմարիչներ, պահակակետ, տեսախցիկներ: Հարկերում առկա են տարհանման պլաններ, իսկ շենքի նկուղը նախատեսված է որպես ապաստարան: Առկա է բուժկետ՝ համալրված առաջին օգնության անհրաժեշտ միջոցներով:

Քոլեջն իրականացնում է ռեսուրսներից բավարարվածության գնահատման հարցումներ դասախոսների և ուսանողների շրջանում:

2023 թվականին դասախոսների շրջանում իրականացված հարցման արդյունքները ներկայացնում են նյութատեխնիկական ռեսուրսներից բավարարվածությունը. հարցմանը մասնակցել է դասախոսական ողջ անձնակազմը: Քոլեջի ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման միակ մեթոդը ներքին շահակիցների շրջանում իրականացվող քանակական սոցիոլոգիական հարցումներն են:

Դատողություններ: Փորձագիտական խումբը կարևորում է, որ Քոլեջն ունի նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնելու համար համապատասխան ենթակառուցվածքներ, ինչի շնորհիվ կարողանում է հասնել կրթական ծրագրերով նախատեսված նպատակներին և վերջնարդյունքներին: Քոլեջն ունի բավարար նվազագույն ենթակառուցվածքներ և նյութատեխնիկական բազա բոլոր կրթական ծրագրերի համար:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Քոլեջը ջանքեր է գործադրում սեփական ռեսուրսներով, ինչպես նաև ԱՀՈՒ համակարգի շրջանակում՝ շահակիցների հետ համագործակցությամբ, իրականացնել պատշաճ մակարդակի կրթական գործընթաց՝ ելնելով մարզի կարիքներից: Միևնույն ժամանակ, ակնհայտ է լաբորատորիաների վերազինման անհրաժեշտությունը, լսարանային ֆոնդի վերանորոգման և կահավորման խնդիրը, որի լուծումը հնարավոր կլինի միայն նոր շենքի շահագործման հանձնումից հետո:

Գրադարանային ֆոնդի հագեցվածության առումով փորձագիտական խումբը կարևորում է Քոլեջի գրադարանի գործունեության կազմակերպման, համալրման և արդիականացման անհրաժեշտությունը՝ ուղղված գրադարանային ծառայությունների արդյունավետության բարձրացմանը և գրականության օգտագործման մշակույթի ձևավորմանը: Փորձագիտական խումբը խրախուսում է, որպեսզի դասախոսական կազմն ուսանողներին տրամադրի այնպիսի առաջադրանքներ, որոնք կխթանեն լրացուցիչ մասնագիտական գրականության ուսումնասիրությունը: Սա, ի թիվս այլ հարցերի, կնպաստի ուսումնական գործընթացում գրադարանի կենտրոնական դերի ամրապնդմանը, ինչպես նաև

ուսանողների գիտելիքների խորացմանը և մասնագիտական կարողությունների զարգացմանը:

Քոլեջի ֆինանսական կառավարումը չի պլանավորվում ռազմավարական զարգացման ծրագրից բխող քայլերի տրամաբանությամբ: Փորձագիտական խումբը ռիսկային է գնահատում այն հանգամանքը, որ Քոլեջի բյուջեի 83%-ից ավելին նախատեսվում է միայն աշխատակիցների վարձատրության համար: Քոլեջի զարգացման ռազմավարական հիմնախնդիրների իրականացման նպատակով ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում, ինչը բացասաբար կարող է անդրադառնալ ՌԾ-ի լիարժեք իրականացման համար: Փորձագիտական խումբը գտնում է, որ բյուջեի բաշխման քաղաքականության փոփոխությունը, այլընտրանքային ֆինանսական ռեսուրսների փնտրումը և ներգրավումը կնպաստի հաստատության կրթական ծրագրերի և ռազմավարական նպատակների արդյունավետ իրականացմանը, իսկ բյուջեի բաշխումն ըստ զարգացման ծրագրի հիմնախնդիրների առավել նպաստավոր կդարձնի իրականացվող աշխատանքները, ինչն իր հերթին կհանգեցնի ռազմավարական զարգացման ծրագրի նպատակների, կրթական ծրագրերի երաշխավորված, կայուն ու շարունակական իրականացմանը:

Թեև Քոլեջի բյուջեն սահմանափակ է և հաստատությունը չունի ըստ կրթական ծրագրերի ֆինանսական կառավարման մոտեցում, տեսանելի է, որ բոլոր կրթական ծրագրերին հավասարաչափ ուշադրություն է դարձվում:

Դրական է, որ Քոլեջում առկա է անվտանգ միջավայր ուսանողների և աշխատակիցների համար, որը հնարավորություն է տալիս կանոնավոր իրականացնել կրթական գործընթացները:

Փորձագիտական խումբը կարևորում է փաստաթղթաշրջանառության գործընթացների ներքին համակարգի մշակման և ներդրման անհրաժեշտությունը՝ իրականացվող գործընթացների արդյունավետության բարձրացման, ներքին շահակցների շրջանում տեղեկատվության փոխանակման և հետադարձ կապի ապահովման նպատակով:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՄՈՒՀ-ում առկա են տրամադրվող ռեսուրսների հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ, որը կարող է նպաստել կրթական միջավայրի շարունակական բարելավմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Գավառի ակադեմիկոս Ա.Թամամշևի անվան գյուղատնտեսական քոլեջն իր կրթական ծրագրերի իրականացման համար

ապահովված է անհրաժեշտ ենթակառուցվածքներով և ռեսուրսներով, արտաքին շահակիցների հետ համագործակցության արդյունքում կարողանում է օգտվել նաև գործընկերների ռեսուրսային բազաներից, փորձում է շարունակաբար նորացնել և բարելավել լսարանային և լաբորատոր ֆոնդերը, ստեղծել է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով, փորձագիտական խումբը գտնում է, որ Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջը համապատասխանում է չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր: Քոլեջում առկա է հաշվետվողականության համակարգ: Բոլոր ստորաբաժանումները (ամբիոններ, Կրիերայի կենտրոն, Որակի ապահովման պատասխանատու, պրակտիկայի ղեկավար) հիմնականում ներկայացնում են կիսամյակային և տարեկան կտրվածքով հաշվետվություններ իրենց գործունեության շրջանակներում: Նախորդ հավատարմագրման արդյունքում փորձագիտական խումբը քոլեջին տրամադրել էր խորհրդատվություն հաշվետվություններում վերլուծական բաղադրիչ ներդնելու ուղղությամբ: Ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ստորաբաժանումների հաշվետվությունները մեծամասամբ կրկին պարունկում են գործողությունների թվարկում, առկա չէ տվյալների համադրում, համեմատություն, որը թույլ կտա դուրս բերել առաջընթաց կամ կուղենշի հետագա բարելավումներ: Ստորաբաժանումների հաշվետվությունների հիման վրա ձևավորվում է տնօրենի հաշվետվությունը, որը ևս մեծամասամբ վերլուծական բնույթ չի կրում, հիմնականում ներկայացնում է

տարվա ընթացքում ՄՈՒՀ-ում տեղի ունեցած գործընթացները և միջոցառումները, ստորաբաժանումների իրականացրած գործողությունները:

Քոլեջն իր ընթացակարգերի և իրականացվող գործընթացների մասին հասանելիությունն ապահովում է 2020-2021 ուստարում ստեղծված պաշտոնական հայալեզու կայքէջի միջոցով՝ https://gsac.am/: Նախորդ ինստիտուցիոնալ հավատարմագրման արդյունքում փորձագիտական խումբը տրամադրել էր խորհրդատվություն բարելավել պաշտոնական կայքէջի բովանդակությունը և տրամադրել տեղեկատվություն քոլեջի գործունեության բոլոր ոլորտների վերաբերյալ: Փորձագիտական դիտարկումների արդյունքում պարզ դարձավ, որ քոլեջը տեխնիկապես թարմացրել է կայքը, այն ունի նոր արտաքին տեսք և ձևավորում: Կայքէջում հրապարակված են Քոլեջում կիրառվող հիմնական թաստաթղթերը՝ ՌԾ, կանոնադրություն, կարգապահական կանոններ և այլն: Ինչպես նաև առկա է տեղեկատվություն ամբիոնների, իրականացվող կրթական ծրագրերի, վարձաչափերի և այլնի հետկապված: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ կայքէջի բովանդակությունը դեռևս համալրման փուլում է:

Քոլեջն իր գործունեության մասին տեղեկատվություն տարածելու նպատակով կիրառում է նաև սոցիալական մեդիայի՝ facebook-յան և instagram-յան հարթակները, որտեղ պարբերաբար թարմացվող տեղեկատվություն է հրապարակվում ՄՈՒՀ-ում կատարվող ընթացիկ աշխատանքների, քոլեջի առօրյա կյանքի, մշակութային միջոցառումների, հանդիպումների և սեմինարների մասին, տեղադրվում են հայտարարությունները:

Իսկ ինչ վերաբերում է հասարակության հետ հետադարձ կապի ապահովմանը, ապա անհրաժեշտ է նշել, որ հիմնական մեխանիզմներ դիտարկվում են ՄՈՒՀ-ի պաշտոնական կայքում ներկայացված հեռախոսահամարները, էլեկտրոնային փոստը և Հետադարձ կապ բաժինը, որը հնարավորություն է ընձեռում հարց կամ նամակ շարադրել: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հաղորդակցման այս ուղիները դեռևս ակտիվորեն չեն կիրառվում: Հետադարձ կապի մեխանիզմ են ծառայում նաև Ֆեյսբուքյան էջը, որի միջոցով ստացվող հիմնական հարցերը կապված են ընդունելության և ուսումնական գործընթացների հետ: Ֆեսբուքյան հարթակում գործող երկրորդ՝ պաշտոնական էջը ակտիվ չէ, փորձագետների դիտարկումների արդյունքում պարզ է դարձել, որ էջին հղված նամակները հաճախ անպատասխան են մնում:

Արտաքին շահակիցների հետ հետադարձ կապ պահպանելու նպատակով քոլեջը կազմակերպում է հանդիպումներ գործատուների և շրջանավարտների հետ,

որտեղ արտաքին շահակիցները ներկայացնում են, թե որոնք են տեղական աշխատաշուկայի՝ մասնագետներին ներկայացվող պահանջները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը ներկայում չի կազմակերպում հասարակությանը գիտելիքների կամ արժեքների փոխանցմանը միտված միջոցառումներ, կարճաժամկետ դասընթացներ: Սակայն 2022-2023 ուստարվա ընթացքում Անասնաբուժության և պարենամթերքների տեխնոլոգիայի ամբիոնի վարիչը երկու կարճաժամկետ դասընթացի ծրագրեր է ներկայացրել ուսումնամանկավարժական խորհրդի նիստին, որոնք արժանացել են հավանության և ուղարկվել ԿԳՄՄՆ հաստատմանը:

Դատողություններ: Դրական է, որ ՄՈՒՀ-ում ձևավորված է ներքին հաշվետվողականության բազմաստիճան համակարգ, որտեղ հստակ սահմանված են հաշվետվությունների ժամանակացույցը, ենթակայության շղթան և պատասխանատուները: Ստորաբաժանումների հաշվետվություններում հիմնականում բացակայում են խորքային վերլուծությունները, իսկ վերհանված խնդիրները հաճախ կրկնվում են տարեցտարի՝ վկայելով առաջարկվող լուծման մեխանիզմների ցածր արդյունավետության մասին: Փորձագիտական խումբը գտնում է, որ հաշվետվությունների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ՄՈՒՀ-ն անհրաժեշտություն կունենա մշակելու այնպիսի ձևաչափ, որը թույլ կտա վերլուծել առկա արդյունքները՝ համեմատելով դրանք նախորդ ժամանակաշրջանի հետ, բացահայտել ձեռքբերումներն ու բացթողումները, վերհանել առկա խնդիրները և առաջարկել դրանց լուծման ուղիներ: Նման մոտեցումը հնարավորություն կտա ոչ միայն արձանագրել կատարված աշխատանքները, այլև գնահատել դրանց արդյունավետությունը և նախանշել հետագա բարելավումների ուղղությունները:

Հասարակության հետ կապերի և տեղեկատվության թափանցիկության ապահովման նպատակով քոլեջը արդյունավետ կիրառում է հաղորդակցման տարբեր հարթակներ՝ պաշտոնական կայք և սոցիալական մեդիայի էջեր: Առավելապես դրական արդյունքներ են գրանցվում սոցիալական մեդիայի հարթակներում, որտեղ պարբերաբար թարմացվող տեղեկատվությունը նպաստում է շահակիցների իրազեկվածության բարձրացմանը: Իսկ ինչ վերաբերում է պաշտոնական կայքէջին և դրա համալրմանը, ապա անհրաժեշտ է հետագայում կարևորել և հրապարակել տեղեկատվություն քոլեջի շրջանավարտների հաջողությունների վերաբերյալ, թե որ մասնագիտությամբ են շրջանավարտները պահանջված աշխատաշուկայում, ինչու դիմորդը ուսումնառության համար պետք է

ընտրի այդ ուսումնական հաստատությունը, ինչ ուժեղ կողմեր կամ առավելություններ այն ունի: Նման մոտեցումը կբարձրացնի քոլեջի տեսանելիությունը և պաշտոնական կայքէջը կդառնա նաև հարթակ ՄԿԾ-ների առավելությունները շեշտադրելու համար: Իսկ օտարալեզու լսարաններում տեսանելություն ձեռք բերելու նպատակով կայքէջը կարող է ունենալ նաև անգլալեզու բաժին:

Քոլեջում բացակայում են հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցմանն ուղղված հատուկ միջոցառումները, ինչը սահմանափակում է հաստատության՝ որպես տարածաշրջանային կրթական և մշակութային կենտրոնի դերակատարությունը: Քոլեջը կարող է նախաձեռնել նաև տարբեր միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն տարածաշրջանի բնակչությանը գյուղատնտեսության և անասնաբուժության ոլորտում կարևոր տեղեկատվության փոխանցմանը, ինչպես օրինակ՝ կենդանիների շրջանում տարատեսակ վարակների փոխանցման կանխարգելման մեթոդներ, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում, պայքարելու արդյունավետ ռազմավարություններ և այլն: Այսպիսի տեղեկատվությունը կարող է ներկայացվել տեսահոլովակների միջոցով, որոնք պատրաստված կլինեն նաև ուսանողների կողմից, ինչը ոչ միայն կնպաստի հասարակության իրազեկվածության բարձրացմանը, այլև ուսանողների հետազոտական կարողությունների զարգացմանը և հասարակական պատասխանատվության բարձրացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան գյուղատնտեսական պետական քոլեջն ունի հաշվետվողականության սահմանված համակարգ, կարևորում է հասարակայնության հետ կապերի պահպանման անհրաժեշտությունը և այդ նպատակով կիրառում է սոցիալական հարթակները և պաշտոնական կայքէջը, փորձագիտական խումբը գտնում է, որ Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջը համապատասխանում է չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր: Գործընկերների ձեռքբերման և հաղորդակցման գործառույթները հիմնականում իրականացնում է դաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը: Արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացները չեն հանդիսանում Քոլեջի ռազմավարական հիմնախնդիրներից:

Հաստատությունն իր կրթական ծրագրերի իրականացման շրջանակներում համագործակցում է շուրջ 18 գործատուների հետ, որոնց թվում են «Գանձակ կաթ» ՍՊԸ-ն, «Նաիրի լենդ» ՍՊԸ-ն, «ՎՏԲ-Արմենիա» ՓԲԸ-ն, «Սևան ԱԿՎԱ» ՓԲԸ-ն, «Գավառ Տրանս» ՍՊԸ-ն և այլն: Գործատուների հետ համագործակցությունն իրականացվում է հիմնականում պրակտիկաների և աշխատանքի վրա հիմնված ուսուցման կազմակերպման շրջանակներում: Սակայն հարկ է նշել, որ որոշ մասնագիտական կրթական ծրագրեր, ինչպիսիք են «Համակարգիչների շահագործում»-ը և «Հաշվապահական հաշվառում»-ը, ունեն ընդամենը մեկական համագործակցող գործատու:

Քոլեջը փոխադարձ այցերի, մասնագիտական վարպետության դասընթացների և փորձի փոխանակման նպատակով ստորագրել է հուշագրեր Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի և «Սիվիտա ԷԸԷՄ» ՓԲԸ-ի հետ: Համագործակցության այս շրջանակներում Քոլեջը տրամադրել է իր տարածքային ռեսուրսները կազմակերպություններին՝ կարճաժամկետ դասընթացների անցկացման համար: Դասընթացները կենտրոնացված են եղել Ձկնաբուծության և Հրուշակեղենի արտադրության թեմաների շուրջ, և դրանց մասնակցել են նաև Քոլեջի ուսանողները և դասախոսները:

Միջազգային գործընկերների որոնման նպատակով Քոլեջը մասնակցում է CARD հիմնադրամի միջոցառումներին: Հաստատությունն առցանց նամակագրության փորձեր է ձեռնարկել տարբեր օտարերկյա քոլեջների հետ, սակայն դրական արդյունքներ դեռևս չեն արձանագրվել: Միջազգայնացման ուղղությամբ Քոլեջը պարբերաբար մասնակցում է «Էրազմուս+» ազգային գրասենյակի տեղեկատվական սեմինարներին: Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի աջակցությամբ փորձ է արվել ներգրավվելու «Էրազմուս +» ծրագրերում, սակայն ներկայացված ծրագիրը չի հաղթել:

Ինչ վերաբերում է ներքին շահակիցների օտար լեզուների իմացությանը, ապա անհրաժեշտ է նշել, որ նախորդ հավատարմագրման փորձագիտական խորհրդատվություններից է եղել շահակիցների օտար լեզուների բարելավման ուղղությամբ աշխատանքների իրականացումը: Ըստ ինքնավերլուծության տվյալների, դասավանդողների 22%-ը և վարչական աշխատակիցների 33%-ը տիրապետում են անգլերենին: Չնայած նշված է, որ ուսանողների 90%-ը տիրապետում է օտար լեզուների, փորձագիտական այցը բացահայտել է, որ իրականում ուսանողների մեծամասնությունը օտար լեզուների չի տիրապետում: Օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացման նպատակով «World Vision» միջազգային բարեգործական կազմակերպության աջակցությամբ անգլերենի դասընթացներ են կազմակերպվել դասախոսների և ուսանողների համար: Այնուհանդերձ, դասընթացների արդյունավետությունը, այսինքն՝ թե որքանով են դրանք նպաստել ներքին շահակիցների օտար լեզվով հաղորդակցվելու հմտությունների զարգացմանը, չի գնահատվել:

Դատողություններ: Դրական է, որ վերջին ժամանակահատվածում Քոլեջը ընդլայնել է իր գործընկերների շրջանակը, ինչը պայմանավորված է մի շարք գործոններով, այդ թվում՝ ԱՀՈՒ կրթական ծրագրերի ներդրմամբ, ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտին ուղղված պետական աջակցության ծրագրերի ներգրավմամբ: Փորձագիտական խումբը նշում է, որ մարզում գործատուների սակավությունը և տնտեսությունների ու ձեռնարկությունների փոքր չափերը սահմանափակում են գործընկերների ներգրավման հնարավորությունները: Պետք է ընդգծել, որ քոլեջը քայլեր է ձեռնարկում արտաքին կապերի զարգացման ուղղությամբ՝ փնտրելով նոր համագործակցության հնարավորություններ, ինչի արդյունքում արդեն ձեռք են բերվել մի շարք նոր գործընկերներ:

Արտաքին կապերի ձևավորման համար քոլեջը չունի առանձնացված բաժին, սակայն գործառույթներն իրականացվում են փոխտնօրենի կողմից, ինչը վկայում է այն մասին, որ քոլեջը կարևորում է արտաքին հաղորդակցության բարձրացումը:

Դրական է նաև այն, որ քոլեջը փորձում է օգտվել միջազգային ծրագրերին մասնակցության հնարավորություններից և ջանքեր է գործադրում տարբեր ծրագրերին մասնակից դառնալու համար: Չնայած այն հանգամանքին, որ այս ոլորտում դեռևս չեն արձանագրվել շոշափելի արդյունքներ, փորձագիտական խումբը խրախուսում է քոլեջին շարունակել ու ուժեղացնել այս ուղղությամբ աշխատանքները՝ նպաստելով միջազգային համագործակցության ընդլայնմանը և նոր հնարավորությունների ստեղծմանը:

Տեղական կառույցների հետ կնքված մի շարք պայմանագրերը և հուշագրերը ուսանողներին հնարավորություն են տալիս անցկացնել իրենց պրակտիկաները համապատասխան գործնական միջավայրերում: Քոլեջին հաջողվել է հաստատել արդյունավետ աշխատանքային հարաբերություններ Գավառ քաղաքի և դրա հարակից տարածքներում գործող շուկայի առաջատար կազմակերպությունների հետ: Այս պայմանագրերն ու հուշագրերը ոչ միայն ապահովում են ուսանողների պրակտիկ ուսուցման հնարավորությունները, այլև ստեղծում են նախադրյալներ ԱՀՈՒ ծրագրերի հաջողման համար:

Ինչ վերաբերում է շահակիցների օտար լեզվի, մասնավորապես՝ անգլերենի իմացությանը, ապա փորձագիտական խումբը շեշտադրում է դրա զարգացման հրատապությունը: Թեև հաստատությունը ձեռնարկել է որոշ քայլեր այս ուղղությամբ, այնուամենայնիվ անհրաժեշտ է ներդնել շարունակական դասընթացներ՝ ընթացիկ գնահատելով դրանց արդյունավետությունը: Միայն օտար լեզվի բավարար իմացության շնորհիվ է հնարավոր դառնալու մջազգային ծրագրերում քոլեջի լիարժեք ներգրավվածությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ վերջին տարիներին ՄՈՒՀ-ը զգալիորեն ընդլայնել է իր գործընկերների շրջանակը, ջանքեր է գործադրում միջազգային գործընկերների ներգրավման և միջազգային ծրագրերում մասնակցելու հնարավորությունները մեծացնելու ուղղությամբ, ինչպես նաև կատարում է որոշակի քայլեր օտար լեզուների, մասնավորապես՝ անգլերենի զարգացման համար, փորձագիտական խումբը գտնում է, որ Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջը համապատասխանում է չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր: Գավառի ակադեմիկոս Ա. Թամաշևի անվան գյուղատնտեսական քոլեջում որակի ապահովման համակարգի ներդրման աշխատանքները մեկնարկել են 2017թ.-ից: 2020թ.-ից քոլեջում առկա է որակի ներքին ապահովման պատասխանատուի հաստիք, մշակվել է պաշտոնի նկարագիր: Որակի մշակույթի ձևավորման և գործընթացների կանոնակարգման նպատակով քոլեջը մշակել է համապատասխան փաստաթղթային բազա: ՄՈՒՀ-ն ունի «Որակի ներքին ապահովման ուղեցույց», «Որակի ներքին ապահովման կանոնակարգ», «Որակի ներքին ապահովման քաղաքականություն և ընթացակարգ»:

Ըստ Որակի ապահովման կենտրոնի կողմից մշակված քաղաքականության՝ որակի ապահովումը միտված է լինելու աջակցել ՄՈՒՀ-ի կառավարման, դաստիարակչական, կրթական, հետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը և նպաստելու է ՄՈՒՀ-ի ՌԾ-ի իրականացմանը և ՄՈՒՀ-ի զարգացմանը: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ը լիարժեքորեն չի սահմանել, թե Որակի ապահովումը կոնկրետ ինչ մեխանիզմներով է նպաստելու նշված ոլորտների բարելավմանը: Բացի այդ, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նշված ոլորտներից ոչ բոլորին է որակի ապահովումն անդրադառնում, օրինակ՝ հետազոտական աշխատանքների իրականացման արդյունավետության գնահատմանը:

Որակի ապահովման պատասխանատուի համար քոլեջը հատկացրել է կես դրույքաչափով հաստիք: ՈՆԱ պատասխանատուի աշխատանքներն իրականացնելու համար նախատեսված է առանձին, անհրաժեշտ ռեսուրսներով համալրված աշխատասենյակ: Անհրաժեշտ է նշել, որ ՈՆԱ պատասխանատուն միաժամանակ հանդիսանում է կադրերի տեսուչ և դասավանդում է «Լանդշաֆտագիտություն և էկոլոգիայի հիմունքներ» առարկան:

Վերջին երեք տարիների ՈՆԱ պատասխանատուի աշխատանքային պլանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2022-2023թթ, 2023-2024թթ. ՈՆԱ համակարգը առավելապես կենտրոնացել է ուսումնական, արտադրական պրակտիկանների և ԱՀՈՒ-ի նկատմամբ վերահսկողության, կայքէջի բովանդակության բարելավման, իսկ 2023-2024թթ. պրակտիկաների արդյունավետության վերաբերյալ հարցումների իրականացման, ամփոփիչ ատեստավորման արդյունքների համեմատական վերլուծության, շրջանավարտների հետագծի ուսումնասիրության վրա և այլն: 2022-2023թթ. գրեթե բոլոր պլանավորված գործողությունների կատարող, ըստ պլանի, հանդիսանում է

ՈՆԱ պատասխանատուն (հարցումների անցկացման դեպքում՝ նաև կարիերայի պատասխանատուն), պատասխանատվությունների բաշխում ըստ ստորաբաժանումների նախատեսված չէ: Հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանք բխեցրած չեն աշխատանքային պլաններից: ՈՆԱ հաշվետվությունները երբեմն պարունակում են տեղեկատվություն քոլեջի ողջ գործունեության մասին, օրինակ՝ ԱՀՈՒ-ի վերաբերյալ բենչմարքինգի կազմակերպման, անցկացված տարբեր բազմաթիվ միջոցառումների մասին: Հաշվետվություններում կրթական գործընթացը բարելավելու շոշափելի առաջարկությունները բացակայում են:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ՈՆԱ աշխատանքները հիմնականում կենտրոնանում են տարբեր շահակիցների կողմից բավարավածության տվյալների հավաքագրման վրա, մասնավորապես՝ ուսանողների բավարավածությունը արտադրական պրակտիկաների, տրամադրվող ռեսուրսների, դասախոսական կազմի և այլնի վերաբերյալ: Հարցումները կառուցված են այնպես, որ հիմնականում դուրս են բերում քանակական տվյալներ: Որոշ հարցումներում առանձնացված է նաև առաջարկությունների հատված. ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ուսանողների առաջարկությունները վերաբերում են առավել մեծ արտադրամասերում պրակտիկաներ անցնելուն, այլ տվյալներ առկա չեն: Իրականացվում են նաև հարցումներ դասախոսների, շրջանավարտների շրջանում: Հարցաշարերի ոսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցում ներառված հարցերը հաճախ ընդհանրական են: Համադրելով քոլեջի կողմից իրականացվող հարցումները և որակի քաղաքականությամբ սահմանված նպատակները՝ կարելի է նշել, որ հարցվողների շրջանակը և հարցումներում առաջադրվող հարցերը առնչվում են վերոգրյալ քաղաքականությամբ սահմանված նպատակներին, սակայն գրեթե բոլոր դեպքերում հավաքագրված տվյալները փաստում են միայն բավարվածության մասին և չեն վերհանում բարելավման ենթակա ուղղություններ: Հարցաթերթերի վերհանված խնդիրները հիմնականում վերաբերել են լսարանային գույքի նորացմանը (սեղաններ, աթոռներ, գրատախտակներ), տեխնիկայի ձեռքբերմանը (համակարգիչներ, տպիչ), գրադարանային ֆոնդի համալրմանը: Հարցումների արդյունքները քննարկվում են քոլեջի ղեկավար կազմի հետ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի գործունեության արդյունավետությունը գնահատելու նպատակով ՈՆԱ պատասխանատուն կազմել է 3 տարվա համեմատական վերլուծություն, որտեղ ըստ տարիների համեմատվում են ընդունելության արդյունքները, ուսանողների, շրջանավարտների,

դասախոսական կազմի քանակական ցուցանիշները, ուսանողների առաջադիմության որակական ցուցանիշները ըստ մասնագիտությունների և ավարտական ամփոփիչ ատեստավորման: Անհրաժեշտ է նշել, որ պատճառահետևանքային կապը եզրահանգումներում թույլ է: Օրինակ՝ վերլուծության մեջ ուսանողների թվի աճը հիմնավորված է միայն քոլեջի վարկանիշի բարձրացմամբ, երկու մասնագիտությունների («Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում /ավտոտրանսպորտում» և «Համակարգիչների շահագործում») շրջանակում արձանագրվել է պետական ամփոփիչ ատեստավորման արդյունքների անկում, սակայն վերհանված չեն պատճառները, նաև առկա չեն առաջարկություններ բարելավման ուղղությամբ: Ուսանողների ցածր առաջադիմություն գրանցվել է նաև այլ կրթական ծրագրերում, իսկ որպես լուծում արվել է ընդհանրական առաջարկ, այն է՝ կիրառել ավելի արդյունավետ դասավանդման մեթոդներ:

Փորձագիտական խմբի ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ ՄՈՒՀ-ի որակի ապահովման համակարգը դեռևս ձևավորման փուլում է, որոշակիորեն իրականացվում են պլանավորման և իրականացման գործընթացներ, համակարգի գնահատման և բարելավման աշխատանքները տեսանելի չեն:

Անդրադառնալով քոլեջի ներկայացրած ինքնավերլուծությանը՝ կարելի է նշել, որ որակի արտաքին գնահատման գործընթացների համար անհրաժեշտ հիմքերը և վերլուծությունների արդյունքները բավարար խորություն և վերլուծականություն չունեն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի ՈՆԱ պատասխանատուի կողմից կազմակերպվել և համակարգվել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության գործընթացը: Կազմված ինքնանվերլուծությունը, այսուհանդերձ, չի տարածվել շահակիցների ամբողջական շրջանակում: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ գործատուների և ներքին շահակիցների կարիքները ամբողջությամբ արտացոլված չեն ինքնավերլուծությունում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում Քոլեջի ջանքերը անհրաժեշտ փաստաթղթային բազան համալրելու ուղղությամբ: Այնուամենայնիվ որակի ապահովման համակարգը դեռևս գտնվում է ձևավորման փուլում և լիարժեք չի գործում:

Մտահոգիչ է այն հանգամանքը, որ որակի ապահովման գործառույթների իրականացումը կենտրոնացված է միայն ՈՆԱ պատասխանատուի վրա, ինչը

խոչընդոտում է համակարգի ամբողջական գործարկմանը: Այս առումով հատկապես անհանգստացնող է այն, որ մյուս ստորաբաժանումների ներգրավվածությունը գործընթացներում թույլ է, իսկ պատասխանատվությունների հստակ բաշխում՝ ըստ ստորաբաժանումների առկա չէ: ՈՆԱ պատասխանատուի պաշտոնի համատեղումը կադրերի տեսուչի և դասախոսի պարտականությունների հետ կարող է վտանգել գնահատումների ու վերլուծությունների օբյեկտիվությունը: ՈՆԱ պատասխանատուի աշխատանքի արդյունավետությունը կաճի, եթե այն զուգակցված չլինի այլ պատասխանատվությունների հետ, սա կօգնի խուսափել շահերի բախումից:

Փորձագիտական խումբը նկատում է, որ որակի ապահովման գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլն ամբողջական չէ: Մասնավորապես, պլանավորման փուլում բացակայում են հստակ չափելի նպատակները, իրականացվող հարցումներն ունեն ընդհանրական բնույթ, իսկ գնահատման փուլում վերլուծությունները մակերեսային են՝ առանց պատճառահետևանքային կապերի խորքային ուսումնասիրության: Հատկանշական է, որ բարելավման գործողությունները հիմնականում սահմանափակվում են ֆիզիկական միջավայրի բարելավմամբ:

Էական բարելավումների անհրաժեշտություն է նկատվում վերլուծություններում: Հարցումների արդյունքները հիմնականում սահմանափակվում են բավարարվածության մակարդակի արձանագրմամբ, համեմատական վերլուծությունները չեն բացահայտում խնդիրների արմատական պատճառները, իսկ ՈՆԱ պատասխանատուի հաշվետվությունները կրում են նկարագրական բնույթ՝ առանց խորքային վերլուծության և կոնկրետ բարելավման առաջարկների:

Փորձագիտական խումբը նշում է, որ շահակիցների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում ցածր է: Գործատուների կարիքները բավարար չափով արտացոլված չեն, ինքնավերլուծության գործընթացում ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը սահմանափակ է, իսկ հարցումների արդյունքները չեն հանգեցնում էական բարելավումների: Առանձնակի ուշադրության է արժանի այն փաստը, որ բացակայում է ՄԿԾ-ների բովանդակային բարելավմանն ուղղված համակարգված մոտեցումը: ՈՆԱ վերլուծություններում արձանագրվում է որոշ կուրսերում որակական առաջադիմության ցածր ցուցանիշ, սակայն խնդիրները չեն ստանում պատշաճ ուշադրություն և վերլուծություն, որը կնպաստեր խնդիրների վերհանմանը և դրանց հաղթահարման որոշումների կայացմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ում որակի մշակույթը ձևավորման փուլում է, այն դեռևս ունի համակարգման կարիք: Անհրաժեշտ է որդեգրել համակարգային մոտեցում՝ վերհանված խնդիրների լուծման և համակարգի արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՈՆԱ համակարգը ներդրվում է 2017 թվականից, սակայն որակի ապահովման ներքին համակարգը դեռևս ամբողջապես ձևավորված և ներդրված չէ, ներքին և արտաքին շահակիցները ամբողջապես ներգրավված չեն որակի ապահովման գործընթացներում, ՊԻԳԲ շրջափուլը ներդրված չէ որակի ապահովման համակարգի գործունեության հիմքում, մշակված ՈԱ մեխանիզմները խորքային խնդիրներ վերհանող չեն, իսկ արված վերլուծությունները թույլ են և չեն բերում ուսումնական գործընթացի որակական բարելավմանը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջը չի բավարարում չափանիշ 10-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելությունը և նպատակները	**Բավարարում է**
2. Կառավարումը ու վարչարարությունը	**Չի բավարարում**
3.Մասնագիտության կրթական ծրագրերը	**Բավարարում է**
4. Ուսանողները	**Բավարարում է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը	**Բավարարում է**
6. Հետազոտությունը և զարգացումը	**Չի բավարարում**
7. Ենթակառուցվածք և ռեսուրսները	**Բավարարում է**
8.Հասարակական պատասխանատվությունը	**Բավարարում է**
9. Արտաքին կապեր և միջազգայնացումը	**Բավարարում է**
10. Որակի ներքին ապահովման համակարգը	**Չի բավարարում**

Արմեն Հարությունյան
Փորձագիտական խմբի ղեկավար
03.12.2024թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Արմեն Հարությունյան՝ 2000 թվականին ավարտել է Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Թատերագիտության բաժինը: 2003 թվականին ստացել է արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2004-2011 թթ. աշխատել է որպես Թատրոնի և կինոյի ֆակուլտետի դեկանի տեղակալ, 2011-2013թթ.՝ ուսումնական մասի վարիչ: 2002թ.-ից դասավանդում է Արվեստի սոցիոլոգիա և Թատրոնի պատմություն Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում: 2014-2023թթ. եղել է Արվեստի պատմության, տեսության և կառավարման ֆակուլտետի դեկանը, իսկ 2023թ-ից Զարգացման գծով պրոռեկտոր է: Մի շարք հոդվածների հեղինակ ու համահեղինակ է:

Նարինե Հովհաննիսյան՝ 2001-2007թթ. սովորել է Պետական Ագրարային Համալսարանի «Հացի, հրուշակեղենի և մակարոնի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտությամբ: 2011-2013թթ. եղել է հայցորդ Ագրարային համալսարանի «Բուսաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաներ» ամբիոնում, 2013թ. ստացել է տեխնիկակակն գիտությունների թեկնածուի աստիճանը: 2013թ. մինչ օրս ՀԱԱՀ-ի Բուսաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաներ ամբիոն, որպես դասախոս է: Դասավանդում է «Հացի, հուշակեղենի և մակարոնի արտադրության տեխնոլոգիա», «Ճյուղի ձեռնարկությունների տեխնոլոգիական հաշվարկներ», «Բուսական ծագման մթերքների վերամշակման տեխնոլոգիա», «Բուժիչ-կանխարգելիչ սնման հացաբուլկեղենի, հրուշակեղենի և մակարոնի տեխնոլոգիա», «Արտադրանքի հավաստագրում», «Սննդամթերքի վերամշակում» առարկանները: 2020թ. մասնակցել է «Հացաթխման արտադրության տեխնոլոգիա» նախնական մասնագիտական պետական կրթական չափորոշիչի մշակման աշխատանքներին: Մի շարք գիտական աշխատությունների հեղինակ է:

Ելենա Մարտիրոսյան՝ 2002 թվականին ավարտել է Երևանի Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվաբանական համալսարանի Ռուսաց լ. և գրակ., անգլ.լ. ֆակուլտետը: 2015-2017 թվականներին եղել է Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնում ռուսաց լեզվի դասավանդող: 2017 թվականից առ այսօր աշխատում է Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնում՝ որպես տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ:

Ինգա Հարությունյան՝ 2021-2024թթ. սովորել է Արարատի տարածաշրջանային պետական քոլեջում «Դեղագործություն» մասնագիտությամբ։ 2023-2024թթ. մասնակցել է ՈԱԱԿ Ուսանողության ձայն նախաձեռնության կողմից կազմակերպված դասընթացներին ուսանող-փորձագետների համար։

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

Գավառի ակադեմիկոս Ա. Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով փորձագիտական գնահատում իրականացնող խմբի այցի

16.09.2024թ.-18.09.2024թ.

	16.09.2024թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Մեկնում Երևանից	8:30	10:30	120 րոպե
2.	Հանդիպում քոլեջի տնօրենի հետ	11:00	11:50	50 րոպե
3.	Հանդիպում քոլեջի փոխտնօրենների հետ	12:00	12:50	50 րոպե
4.	Հանդիպում ինքնավերլուծություն կատարած խմբի հետ	13:00	13:30	30 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտականխմբի քննարկումներ	13:40	14:30	50 րոպե
6.	Հանդիպում քոլեջի շրջանավարտների հետ (10-12 հոգի)	14:40	15:30	50 րոպե
7.	Հանդիպում գործատուների հետ (10-12 հոգի)	15:40	16:30	50 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում:	16:40	18:30	110 րոպե

	17.09.2024թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ	10:00	10:50	50 րոպե
2.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (10-12 հոգի)	11:00	11:50	50 րոպե
3.	Ռեսուրսների դիտարկում	12:00	13:00	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտականխմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
5.	Հանդիպում ուսանողների հետ (10-12 հոգի)	14:20	15:10	50 րոպե
6.	Հանդիպում քոլեջի կառավարման խորհրդի անդամների հետ	15:20	16:30	50 րոպե

7.	Հանդիպում Ուսանողական խորհրդի անդամների հետ	16:40	17:10	30 րոպե
8.	Հանդիպում հաստատության ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ (կարերայի ուղղորդման պատ., պրակտիկայի վարիչ, գրադարանավար, գլխավոր հաշվապահ, կաղրերի բաժնի տեսուչ, արխիվավար, բուժքույր):	17:20	18:10	50 րոպե
9.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակ հանդիպում	18:20	19:00	40 րոպե

	18.09.2024թ.		Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Դասալսում		10:00	11:00	60 րոպե
2.	Հանդիպում «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» և «Անասնաբուժություն» կրթական ծրագրերի պատասխանատուների և դասախոսների հետ	Հանդիպում «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» կրթական ծրագրի պատասխանատուի և դասախոսների հետ	11:10	12:10	60 րոպե
3.	Հանդիպում «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» և «Անասնաբուժություն» ՄԿԾ-ների ուսանողների հետ (10-12 հոգի)	Հանդիպում «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» ՄԿԾ ուսանողների հետ (10-12 հոգի)	12:20	13:10	50 րոպե
4.	Ընդմիջում,փորձագիտական խմբի քննարկում		13:20	14:10	50 րոպե
5.	Հանդիպում ՈՆԱ ստորաբաժանման հետ		14:20	15:10	50 րոպե
6.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ		15:20	15:40	20 րոպե
7.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից		15:50	16:20	30 րոպե

	ընտրված կազմի հետ			
8.	Փորձագիտական խմբի փակ քննարկում	16:30	17:30	60 րոպե
9.	Հանդիպում ՄՈՒՀ-ի ղեկավար կազմի հետ	17:40	18:00	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	ՓԱՍՏԱԹՂԹԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՉԱՓ ԻՇ
1.	Ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման վերլուծություններ և հաշվետվություններ, որ տեղ են գտել ՌԾ-ում	1
2.	ՌԾ իրականացման տարեկան հաշվետվություն 2021 և 2022թթ. համար	1
3.	Տվյալներ ՄՈՒՀ-ի արտաբյուջեի վերաբերյալ	2
4.	Ստորաբաժանումների պլաններ վերջին 3 տարիների համար	2
5.	Կառավարման, տնօրենական, ուսումնամեթոդական խորհուրդների նիստերի արձանագրություններ (վերջին 2 տարիների համար)	2
6.	Նախահաշիվներ և կատարողականներ (վերջին 3 տարիների)	2
7.	Լրացուցիչ վարձատրված և խրախուսված դասախոսների ցանկ (վերջին 3 տարների համար)	2
8.	Նախորդ հավատարմագրման բարելավման ծրագիրը և դրա կատարողականը	2
9.	Առաջադրված 3 ՄԿԾ-ների շրջանակներում տրամադրված առաջադրանքներ, դիպլոմային աշխատանքներ, ռեֆերատներ, գործնական կարողությունների ձևավորմանը միտված ընթացիկ առաջադրանքներ	3
10.	ԱՀՈՒ-ի պրակտիկայի հաշվետվություններ, պրակտիկայի օրագրեր	3
11.	Ուսումնառության պլաններ	3
12.	Պրակտիկայի օրագրեր, գնահատման չափանիշներ	3
13.	Մասնագիտական մոդուլների շրջանակներում ուսանողների տրամադրվող ուսումնառության նյութեր	3
14.	Ըստ ՄԿԾ-ների լիցենզիոն տեղերը և ուսանողների քանակն ըստ կուրսերի	3
15.	«Վիճակագրության հիմունքներ» մոդուլի շրջանակում ուսման առաջադիմության վրա ազդող գործոնների բացահայտմանը նվիրված ուսանողի հետազոտական աշխատանքը	3

16.	ԱՀՈՒ կրթական ծրագրերի ուսումնառության արդյունքների ապահովման քարտեզագրում /ՄՈՒՀ-ում, գործատուի մոտ/	3
17.	ԱՀՈՒ մշտադիտարկման այցի թերթիկներ, ցանկալի է՝ լրացված, ԱՀՈՒ պատասխանատուի հաշվետվություններ	3
18.	Գործատուների կարիքների վերհանման հարցաշարեր, ֆոկուս խմբերի արձանագրություններ և վերլուծություններ	3
19.	Գործատուների առաջարկությունները ՄԿԾ-ների բարելավման կամ փոփոխությունների վերաբերյալ	3
20.	Քոլեջի կողմից ՊԿՉ-ների փոփոխությունների առաջարկությունների փաթեթներ	3
21.	Շրջանավարտների բազա՝ ըստ մասնագիտությունների (վերջին 3 տարիների)	4
22.	Կարիերայի կենտրոնի աշխատանքային պլաններ, հաշվետվություններ, համագործակցության պայմանագրեր	4
23.	Վերլուծություններ շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ	4
24.	ՈՒԽ աշխատանքային պլաններ, հաշվետվություններ	4
25.	ՈՒԽ նիստերի արձանագրություններ	4
26.	Դասախոսական կազմի կարիքների վերհանման վերլուծություն	5
27.	Դասալսումների արձանագրություններ, ցանկալի է, որ նորարարական մեթոդների կիրառման դաս լինի	5
28.	Դասախոսական կազմի կարիքների վերհանման նպատակով իրականացված դասալսումների արձանագրություններ	5
29.	Հաստիքացուցակ 2023-2024 ուս տարվա՝ 2024թ. հունվարի դրությամբ	5
30.	Դասախոսի մրցույթի արձանագրություն, հարցաշար, տվյալ այն մասին, թե վերջին 3 տարում մրցութային կարգով քանի դասախոս է ընդունվել	5
31.	Մասնագիտական վերապատրաստում անցած դասախոսական կազմի ցանկ վերջին 3 տարիների համար	5
32.	Դասախոսների գնահատման նպատակով իրականացված վերլուծություններ	5
33.	Մասնագիտական առաջընթացի (պաշտոնի բարձրացումներ) տվյալներ 3 տարիների համար	5

34.	Դասախոսական կազմի կողմից տպագրված հոդվածներ, ձեռնարկներ և այլ հետազոտական աշխատանքներ	6
35.	Ուսանողների կողմից իրականացված հետազոտական, վերլուծական աշխատանքներ	6
36.	Լաբորատորիաների գույքացուցակներ	7
37.	Վերջին 3 տարում միջազգային ծրագրերով ձեռքբերված գույքացանկ	7
38.	Համագործակցող գործատուների ցանկ՝ ըստ ոլորտների և կրթական ծրագրերի	9
39.	Բուհերի և քոլեջների հետ համագործակցության բոլոր պայմանագրերը	9
40.	Կրթության որակի խնդիրների և շահակիցների բավարարվածության վերհանման նպատակով իրականացված հարցումների վերլուծություններ և հարցաթերթիկի օրինակներ	10
41.	ՈԱ պատասխանատուի աշխատանքային տարեկան պլաններ և հաշվետվություններ	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ակումբ մասնաշենք,
Ավտոտնակ,
Բուժկետ,
Գրադարան,
Դահլիճ,
Լսարաններ,
Լաբորատորիաներ,
Համակարգչային սենյակներ,
Մասնագիտական կահավորված լսարաններ։

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՍՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. ԱՀՈՒ Աշխատանքի վրա հիմնված ուսուցում
2. ՈԱԱԿ Որակի ապահովման ազգային կենտրոն
3. ՈԱՇ Որակավորումների ազգին շրջանակ
4. ՀՀ ԿԳՄՍՆ Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
5. ՊԿՉ Պետական կրթական չափորոշիչ
6. ԻՎ Ինքնավերլուծություն
7. ՄԿԾ Մասնագիտական կրթական ծրագիր
8. ՄՄԾ Միասնական սոցիալական ծառայություն
9. ՌԾ Ռազմավարական ծրագիր
10. ՊՈԱԿ Պետական ոչ առևտրային կազմակերպություն
11. ՄՈՒՀ Մասնագիտական ուսումնական հաստատություն
12. ՈԱ Որակի ապահովում
13. ՈՆԱ Որակի ներքին ապահովում
14. ԳԱՑ Գնահատման առանցքային ցուցանիշներ
15. ԿԽ Կառավարման խորհուրդ
16. ՈւԽ Ուսանողական խորհուրդ
17. ՄԽ Մանկավարժական խորհուրդ